

ՀՀ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Գագիկ Տեր-Հարությունյան

ՀՀ–Թուրքիա հարաբերությունների շուրջ ընթացող բանավեճերը, չնայած դրանցում առկա քաղաքական բնույթի շահարկումներին, ընդունել են համահայկական բնույթ: Արդյունքում՝ այդ խնդրում, հատկապես «արձանագրությունների» վերլուծության առումով, դժվար է գտնել կողմ կամ դեմ նոր փաստարկներ եւ հիմնավորումներ: Միեւնույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը (կամ այդ գործընթացի առաջին փուլերից մեկը) հաճախ կամ բացարձակ «մռայլ», կամ էլ «վարդագույն» է ընկալվում: Նման մոտեցումները բնավ չեն նպաստում իրողության օբյեկտիվ գնահատման եւ, առավել եւս, մեր հետագա գործողությունների մշակման գործին: Խնդրի շուրջ ստեղծված տեղեկատվական իրադրությունը հուշում է, որ թերեւս կարիք կա մեկ անգամ եւս փորձել մեկնաբանելու ՀՀ – Թուրքիա հարաբերությունների համատեքստը եւ կողմերի դրդապատճառները:

«Լիցքաթափման» փուլ. Ցանկացած լուրջ քաղաքական խնդրի շուրջ քննարկումները ենթադրում են ելակետային աշխարհաքաղաքական իրավիճակի վերաբերյալ պատկերացումների հստակեցում: Համառոտակի այդ իրավիճակը կարելի է գնահատել որպես ժամանակավոր «լիցքաթափման» փուլ ընթացող «բազմաբեւեռ սառը պատերազմում»: Նախաձեռնությունն այս խնդրում, ելնելով բոլոր նախանշաններից, ամերիկյան է. Միացյալ Նահանգների իսթերլիշմենթը, իրատեսորեն գնահատելով սեփական ընդհանրական ռեսուրսների նվազումը, «լիցքաթափումը» ծրագրել էր նախապես: Նման նախագծի իրականացման համար նախագահ ընտրվեց «խաղաղասեր» Բարաք Օբաման, որն, ի տարբերություն իր նախորդի, սկսեց իրագործել ոչ թե «կոշտ», այլ «փափուկ ուժի» ռազմավարությունը: Այսօր «լիցքաթափման» միտումներն արտահայտվում են բազմաթիվ գործընթացներում, որոնցից առանձնացնենք մի քանիսը.

- ❖ ԱՄՆ եւ նրա դաշնակիցների զինված ուժերը, մասամբ իրականացնելով «դեկավարվող քառսի ձեւավորման» իրենց առաքելությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում, աստիճանաբար լքում են Իրաքը,

- ❖ չնայած տարբեր ամբիոններից երբեմն հնչող ռազմատենչ հայտարարություններին, էապես բարելավվել են հարաբերությունները

Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ. այսօր կարելի է ամրագրել, որ այդ երկրների միջեւ զինված ընդհարման հավանականությունը ոչ միայն էպպես նվազել է, այլեւ ստեղծվել են երկուստեք համագործակցության նախադրյալներ,

❖ ԱՄՆ եւ ՆԱՏՕ անդամ երկրներում ակտիվացել են քննարկումները Աֆղանստանից զինված ուժերի դուրսբերման մասին: Վերջնական քաղաքական որոշումներ այդ խնդրի շուրջ դեռեւս չեն ընդունվել, սակայն ներկայիս զարգացումները հիշեցնում են Իրաքից զորքերի դուրսբերմանը նախորդող գործընթացները,

❖ Ինչ-որ չափով կարգավորվում են Միացյալ Նահանգներ – Ռուսաստան հարաբերությունները: Մասնավորապես ԱՄՆ նախագահի որոշումը, որով նա հրաժարվեց հակահրթիռային համակարգեր տեղադրել Լեհաստանում եւ Չեխիայում, հանգեցրեց Ռուսաստանի որոշմանը՝ Կալինինգրադի մարզում «Իսկենդերներ» չտեղակայելու վերաբերյալ,

❖ փաստորեն ՆԱՏՕ-ն ընդունեց 2008թ. վրաց-ռուսական պատերազմի ռազմական արդյունքները եւ այդպիսով հրաժարվեց Վրաստանն այդ կազմակերպություն ընդունելու ծրագրերից,

❖ ԱՄՆ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ ընթանում են բանակցություններ ռազմավարական խնդիրների (օրինակ՝ գլոբալ տաքացման եւ տնտեսական բնույթի) շուրջ համագործակցություն հաստատելու նպատակով,

❖ նկատելի է ԵՄ ձգտումը ԱՄՆ-ի եւ ՌԴ-ի հետ ավելի հաշվեկշռված հարաբերություններ ձեւավորելու ուղղությամբ, տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել ՆԱՏՕ–ՀԱՊԿ–ՇՀԿ համագործակցության անհրաժեշտության մասին նյութերի:

Խիստ համառոտ ներկայացված վերոնշյալ գործոնների թիվը կարելի է ավելացնել, սակայն այդքանն էլ բավարար է՝ վկայելու, որ ներկայումս բազմաբեւեռ աշխարհի բոլոր հիմնական դերակատարները որոշակիորեն փորձում են այս կամ այն չափով հաշվի առնել միմյանց հավակնությունները եւ ավելի զիջողական մոտեցումներ ցուցաբերել: Նման տրամաբանության համատեքստում հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական փաստացի հակամարտությունը (որն արդարացիորեն ընկալվում է որպես միասնական «փաթեթ») որոշակի խոչընդոտ է հանդիսանում ապագա աշխարհակարգի վերաբերյալ իրենց պատկերացումներն իրագործել փորձող մեծ տերությունների համար: Այդ հանգամանքն է, որ այսօր ակտուալացրել է ՀՀ–Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրը, որն արտահայտվում է գլոբալ դերակատարների կողմից այդ գործընթացը «խրախուսելու» (երբեմն դա մեկնաբանվում է նաեւ որպես արտաքին ճնշում) տեսքով:

Այս ամենի առիթով նկատենք, որ, անշուշտ, կան իրադրություններ, երբ անգամ ոչ շատ մեծ ռեսուրսների տիրապետող երկիրը, ելնելով իր գերագույն ազգային շահերից, պարտավոր է դեմ գնալ ցանկացած միջազգային միտման: Սակայն կարծում ենք, որ հարաբերությունների վերահաստատման (եւ ոչ թե հաստատման, քանի որ Երրորդ հանրապետության առաջին տարիներին ՀՀ-Թուրքիա սահմանը բաց էր) գործընթացը չի կարելի դասել նման իրադրությունների շարքին: Ակնհայտ մարտահրավերների եւ ազգային-բարոյական գործոնների շարքում առկա են այլ հանգամանքներ, որոնք միտված են ՀՀ եւ ԼՂՀ ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Դրանց թվին պետք է դասել նաեւ (ինչու ոչ) ռազմավարական դաշնակից Ռուսաստանի եւ արեւմտյան գործընկերների հետ մեր ունեցած կառուցողական հարաբերությունների պահպանման կարելությունը եւ գլոբալ միտումներին համարժեք լինելու անհրաժեշտությունը:

Հավելենք նաեւ, որ վերոհիշյալ «լիցքաթափման» տրամաբանությունը գործում է նաեւ Թուրքիայի պարագայում:

Թուրքիայի հնարավոր դրդապատճառները. Այս երկիրը հայերի, ինչպես նաեւ հույների եւ ասորիների նկատմամբ ցեղասպանություն կատարելու եւ իր հանցանքները չընդունելու պատճառով միջազգային հանրությունում մասամբ «որոնման մեջ գտնվող հանցագործի» կարգավիճակ է ձեռք բերել: Այդ իրողությունը մշտապես օգտագործվել է Թուրքիայի դեմ եւ, չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ արձանագրություններում Ցեղասպանության վերաբերյալ խոսք չկա, ակնհայտ է, որ հարաբերությունների հաստատումը ՀՀ-ի հետ նպաստելու է Թուրքիայի «իմիջի» բարելավմանը: Դա մասամբ կնպաստի նաեւ թուրքերի՝ ԵՄ-ին անդամագրվելու գործընթացին, չնայած այդ խնդրի լուծումը, հաշվի առնելով եվրոպական առաջատար երկրների ներկայիս տրամադրությունները, այսօր միտում ունի փոխադրվելու զուտ տեսական հարթություն:

Նկատենք նաեւ, որ Թուրքիան, ինչպես եւ նախկինում, շարունակում է մնալ «հիվանդ օրգանիզմ»: Չունենալով բավարար քաղաքակրթական ռեսուրսներ՝ այդ երկիրը չի կարողանում ինտեգրել իր տարածքում բնակվող տարբեր էթնոսներին (քրդերին, հայերին, հույներին, վրացիներին, արաբներին եւ այլոց) եւ այսօր, բնակչության ինքնության խնդրի հետ կապված, կանգնած է լուրջ հիմնախնդիրների առջեւ¹: Հարաբերություններ հաստատելով հայերի հետ՝ թուրքական ընտրանին կարծես թե երկխոսություն վարելու պատրաստակամություն է ցուցադրում եւ այդպիսով փորձում մասնակիորեն մեղմել խնդիրը: Միեւնույն ժամանակ, ՀՀ-ի հետ

հարաբերություններ հաստատելու թուրքիայի ձգտումը պայմանավորված չէ սոսկ ներքին հիմնախնդիրներով:

Այսօր թուրքիայի քաղաքական-վերլուծաբանական ընտրանու շրջանակներում տարածում է գտնում «նեոսոմանիզմի» դոկտրինը (այն երբեմն անվանում են «Գյուլի դեկլարացիա»): Դոկտրինի հենքում ընկած է այն խիստ կասկածելի թեզը, թե Օսմանյան կայսրության օրոք տարածաշրջանում իրավիճակն ավելի բարվոք էր, քան ներկայումս, եւ որ անհրաժեշտ է այդ իրավիճակը վերականգնել, սակայն ոչ նախկին բռնատիրության տեսքով: Ըստ Միջազգային հարաբերությունների եւ ռազմավարական վերլուծությունների կենտրոնի տնօրեն Սինան Օհանի, թուրքիան այն միակ երկիրն է, որը կարող է հավակնել Մերձավոր եւ Միջին Արեւելքն արդիականացնողի դերին եւ ունակ է այդ տարածաշրջանը «հաշտեցնել» Արեւմուտքի հետ: Ելնելով նման դրույթներից՝ թուրքական նեոիմպերիալիստները ցանկանում են իրագործել այսպես կոչված «Երեք միջանցքների» աշխարհաքաղաքական եւ, ըստ ամենայնի՝ աշխարհագաղափարախոսական նախագիծը: Ծրագրում ներկայացված երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Եգիպտոսը (առաջին միջանցք), Իրաքը եւ Պարսից ծոցի երկրները (երկրորդ միջանցք), Իրանը եւ Պակիստանը (երրորդ միջանցք) թուրքիայի գլխավորությամբ պետք է կազմեն մի ընդհանուր մեզանթակառուցվածք, որը կներառի տրանսպորտային ճանապարհները, նավթամուղները եւ գազամուղները, էլեկտրացանցերը, կապը եւ ինտերնետը, բանկային համակարգը եւ այլն:

Ակնհայտ է, որ նման նախագծերի առկայությունը, թուրքական կողմի համար խիստ ակտուալացնում է հայ-թուրքական սահմանի բացումը: Կարծում ենք, որ այս հանգամանքը պետք է հաշվի առնվի թուրքիայի հետ դեռեւս նոր սկսվող մեր հարաբերություններում:

Հնարավոր դրական գործոնները ՀՀ-ի համար. Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կարող է ունենալ հետեւյալ դրական հետեւանքները.

Թուրքիա–Ադրբեջան հարաբերություններում այսօր հստակ նկատվում է վատթարացման միտում, եւ ՀՀ ու ԼՂՀ խնդրում նախկինում միասնական թուրք-ադրբեջանական ճակատում որոշակի ճեղքեր են գոյացել: Դրա նասին են վկայում ոչ միայն Բաքվի պաշտոնապես հնչող դժգոհությունները ՀՀ–Թուրքիա դիվանագիտական գործընթացների առիթով. գործնական հարթությունում Ադրբեջանում թուրքական տնտեսական ընկերությունները ցուցադրաբար եւ խիստ ստուգումների են ենթարկվում, խստացել է Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ անձնագրային ռեժիմը եւ այլն: Եթե անգամ ենթադրենք, թե նման գործողությունները

հմուտ իմիտացիա են, իսկ իրականում գործում է սքոլված պանթուրքական համերաշխությունը, ապա միեւնույն է, ադրբեջանական ու թուրքական հանրությունների գիտակցությունում վերոնշյալ գործընթացները որոշակի բացասական հետք են թողնում: Այս ամենը խիստ կարելու է ԼՂՀ խնդրի քաղաքական կարգավորման տեսակետից. հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ ագրեսիվ պլանների իրագործման փորձը հնարավոր է բացառապես Ադրբեջան–Թուրքիա սերտ համագործակցման պարագայում:

Տրանսպորտային նոր ուղու բացման հնարավորությունները բավական շատ են քննարկվել մեր տեղեկատվական դաշտում, սակայն խնդրի հրատապությունը ՀՀ-ի համար չի նվազում. ճանապարհային այլընտրանքը թույլ կտա զգալիորեն թուլացնել մեր ապրանքաշրջանառության կախվածությունը վրացական գործոնից:

Ինչպես արդեն նշել ենք, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Թուրքիայի հետ՝ ՀՀ-ն համահունչ կգործի գլոբալ լիցքաթափման գործընթացներին եւ միջազգային հանրությունում չի կորցնի վստահելի գործընկերոջ վարկը:

Միեւնույն ժամանակ, շեշտենք, որ վերոնշյալ դրական հանգամանքները հնարավոր են միայն այն պարագայում, եթե ՀՀ-ն անհրաժեշտ որակներ ցուցաբերի դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական եւ մշակութային մրցակցության պայմաններում: Կարծում ենք նաեւ, որ որպես ամենավատ հետեւանք կարելի է դիտարկել ՀՀ–Թուրքիա խնդրի պատճառով Սփյուռքում անհանդուրժողականության սերմանումը եւ իրարամերժ ճամբարների գոյացումը:

Հայության համատեքստը. ՀՀ–Թուրքիա հարաբերությունների հնարավոր վերահաստատման գործընթացը, բնականաբար, լայն եւ երբեմն մերժողական արձագանք է ստացել Հայության տարբեր հատվածներում եւ որոշ քաղաքական ուժերի (հատկապես՝ ՀՅԴ) շրջանակներում: Նկատենք, որ մերժողական մոտեցումները Թուրքիայի նկատմամբ միանգամայն բնական երեւույթ են Ցեղասպանություն ապրած ժողովրդի համար եւ առնվազն այդ պատճառով պետք է հարգանքով ու ըմբռնումով մոտենալ ցանկացած հայի նման դիրքորոշմանը: Կարելի է ավելացնել նաեւ, որ խնդրի նկատմամբ բացասական դիրքորոշումները պետք է որ էլ ավելի ամրացնեն ՀՀ պաշտոնական դիրքերը թուրքերի հետ բանակցություններում:

Բոլոր պարագաներում ակնհայտ է, որ ՀՀ–Թուրքիա հարաբերությունների հաստատման գործընթացը Հայությանն ուղղված մարտահրավեր է: Այն պահանջում է համարժեք ըմբռնում եւ գործողություններ:

Ստեղծված իրավիճակում Ափյուռքը պետք է ըմբռնումով մոտենա հայկական պետությունների անվտանգության հարցերին եւ, լինելով ավելի անկաշկանդ, ակտիվացնի իր պահանջատիրական ջանքերը: Միեւնույն ժամանակ, անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել Հայության գործունեությունը՝ շեշտը չդնելով միայն Ցեղասպանության եւ պահանջատիրության խնդիրների վրա: Արդի աշխարհում մրցակցության գրավականն առաջին հերթին մտավոր-ինտելեկտուալ ռեսուրսներն են, սակայն այդ ոլորտում այսօր մենք լուրջ հիմնախնդիրներ ունենք: Դա պետք է լինի մեր ազգային ընտրանու եւ ազգային կապիտալի առաջնահերթ նպատակը²:

«Արձանագրությունները». ՀՀ-Թուրքիա հարաբերությունների վերահաստատման ընդդիմախոսների հիմնավորումները գլխավորապես ուղղված են ժնեյան արձանագրությունների ձեւին ու բովանդակությանը: Պետք է ընդունել, որ որոշ կետեր, իրոք, մտահոգիչ են իրենց բովանդակությամբ, իսկ որոշների շարադրանքի ձեւը, թերեւս, չի համապատասխանում արդի դիվանագիտության եւ միջազգային իրավունքի պահանջներին: Վերջինի առիթով նկատենք, որ ՀՀ ԱԳՆ-ն հաճախ անփույթ է գործում, եւ, ըստ էության, այդ գերատեսչության «ապարատում», գլխավորապես նախկին նախարարների աշխատանքային ոճի շնորհիվ, չեն ձեւավորվել նոր պայմաններին համապատասխան անհրաժեշտ ունակություններ:

Միեւնույն ժամանակ, պետք է ընդունել, որ քաղաքականությունում ընդունվող փաստաթղթերը, անշուշտ, կարելի է, բայց ամենեւին՝ ոչ որոշիչ: Ոչ վաղ անցյալում՝ 1939 թվականին, կնքվեց Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը, ինչը, սակայն, չխանգարեց Երրորդ ռեյխին երկու տարի հետո տոտալ պատերազմ հայտարարել Խորհրդային Միությանը: Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության Հելսինկյան խորհրդակցության եզրափակիչ ակտը (1975թ. կնքված) նույնպես բավական արագ կորցրեց հրատապությունը, եւ այդ ժամանակահատվածի ամենանշանավոր քաղաքական միջոցառումներից մեկից հիշատակ մնացին միայն մարդու իրավունքները պաշտպանող Հելսինկյան խմբերը: Ակնհայտ է, որ միջազգային համաձայնագրերն արհամարհելու տասնյակ, հարյուրավոր օրինակներ կարելի է բերել: Այդ առիթով նկատենք, որ եթե համաշխարհային պատմությունն ընթանար համաձայն կնքված պայմանագրերի, ապա վաղուց ի վեր մեր երկրագնդում հաստատված կլինեին հավերժ խաղաղությունն ու բարօրությունը:

Որոշ հետեւություններ. Ակնհայտ է, որ ՀՀ-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատմանը չեն հետեւելու ոչ ակնթարթային տնտեսական աճը, ոչ էլ ՀՀ եւ ԼՂՀ կապիտուլյացիան:

Այս ամենը քաղաքական դինամիկ գործընթաց է, որից յուրաքանչյուր կողմը ցանկանում է քաղել առավել օգուտներ, իսկ օգուտների կան վնասների երկկողմանի հաշվեկշիռն էապես կախված կլինի նրանից, թե ով ինչ արդյունավետությամբ կգործի: Բոլոր պարագաներում տարածաշրջանային քաղաքականությունում ՀՀ արտաքին գերատեսչությունը պետք է շարունակի ամրապնդել ռազմավարական հարաբերություններն Իրանի հետ (որն, ի դեպ, Թուրքիայի սկզբունքային մրցակիցն է գրեթե բոլոր ոլորտներում), նոր որակ հաղորդել Հունաստանի հետ հարաբերություններին՝ այդպիսով սահմանափակելով Թուրքիայի ավելորդ հավակնությունները: Այդ ամենին զուգահեռ՝ պետք է փնտրել նաև ոչ ավանդական գործընկերներ, ինչպիսին է, օրինակ, Իսրայելը, որը վերջին տարիներին լուրջ տարածայնություններ ունի Թուրքիայի հետ: Համեմայնդեպս, պետք է փաստել, որ հարաբերությունների հաստատումը Թուրքիայի հետ լուրջ մարտահրավեր է հայկական պետությունների եւ Հայության համար, ինչն էլ պետք է թելադրի առավելագույն չափով մոբիլիզացնել մեր ռեսուրսները:

¹ Այս հանգամանքը միակը չէ, որ խնդիրներ է ստեղծում Թուրքիայում: Ինչպես հայտնի է, այսօր ծայր աստիճան սրվել են հակասությունները հասարակության աշխարհիկ եւ կրոնական կողմնորոշում ունեցող հատվածների միջև: Տեղին է նշել, որ աղմուկ համած «Էրզնեքոն»-ը, համաձայն Global Research կենտրոնի վերլուծաբանների, ամերիկյան նախագիծ է եւ ստեղծվել է դեռևս Առաջին սառը պատերազմի տարիներին, Թուրքիայի վրա ԽՍՀՄ հնարավոր հարձակման պարագայում գրավյալ տարածքներում պարտիզանական բնույթի դիմադրություն կազմակերպելու նպատակով: Համաձայն որոշ դիտորդների, չի կարելի բացառել այն վարկածը, որ ներկայիս հակասությունները «աշխարհիկների» եւ «իսլամիստների» միջև Թուրքիայում հրահրվում են ամերիկյան այն ուժի կենտրոնների կողմից, որոնք գտնում են, որ այդ երկրի հզորացումը հակասում է ԱՄՆ շահերին:

² Նկատենք, որ համաձայն որոշ գնահատականների՝ Հայության ՀՆԱ-ն (այսինքն՝ հայկական կապիտալի շնորհիվ գոյացած համախառն արտադրանքը) միանգամայն համադրելի է Թուրքիայի Հանրապետության ՀՆԱ-ի հետ (մոտ \$450 մլրդ): Այսինքն՝ մարտահրավերներին արձագանքելու տեսակետից կարծես թե մեր նյութական ռեսուրսները, անհրաժեշտ կազմակերպվածության պարագայում, պետք է որ բավարար լինեն այդ խնդիրները լուծելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ *Ռուբեն Սաֆրաստյան*

Հայաստանի արտաքին քաղաքականությունը հետապնդում է երկու նպատակ. առաջինն ակնհայտ է՝ երկրի անվտանգության ապահովումը, երկրորդը զուտ հայկական խնդիրներն են, որոնց թվում նաև Հայկական հարցը: Եվ այս երկու նպատակների համադրությունն է, որ ստեղծում է մեր արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղությունը: Այս երկու նպատակները փոխկապակցված են: Որքան մենք կունենանք ուժեղ, անվտանգ Հայաստան, նույնքան հեշտ կլուծենք մեր ազգային խնդիրները: Որքանով մենք կհետապնդենք մեր ազգային խնդիրների լուծումը՝ Ցեղասպանության ճանաչումը եւ նրա հետեւանքների վերացումը, Ղարաբաղի հարցի արդար լուծումը, այնքանով հեշտությամբ մենք կկարողանանք լուծել մեր պետականության հզորացման խնդիրը:

Այս առումով մեր արտաքին քաղաքականության կարելորագույն խնդիրն է հարեւան թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Ամենակարելորդ հետեւյալն է, որ մենք մեր հարաբերությունները թուրքիայի հետ կարողանանք կարգավորել առանց նախապայմանների: Այս գիծն է Հայաստանի արտաքին քաղաքականության կողմից հռչակվել որպես հիմնական դեռեւս 1990-ական թվականներից, եւ այս քաղաքականությունն է, որ շարունակվել է տասնամյակների ընթացքում: Եվ այժմ մենք տեսնում ենք այդ քաղաքականության արդյունքները. կան արդեն որոշակի փաստաթղթեր, արձանագրություններ:

Կարելոր է հասկանալ՝ ինչո՞ւ թուրքիան համաձայնեց ստորագրել այս փաստաթղթերը: Չէ՞ որ, մոտավորապես մեկ ու կես տասնամյակ է, ինչ թուրքիան Հայաստանի առջեւ 3 նախապայման էր առաջ քաշում: Դրանք, ըստ էության, ծառայում էին որոշակի քաղաքականության նպատակներին: Թուրքիան Հայաստանի նկատմամբ անց էր կացնում հարկադրման քաղաքականություն, որը ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգում հանդիպում է քիչ դեպքերում. որպես կանոն՝ միջպետական երկկողմանի հարաբերությունները հիմնվում են կոմպրոմիսի վրա: Թուրքիան ընտրել էր Հայաստանի նկատմամբ հարկադրման քաղաքականությունը՝ հույս ունենալով, որ Հայաստանը կզնա զիջումների Ղարաբաղի, Ցեղասպանության միջազգային ճանաչման եւ Կարսի

պայմանագրի վերահաստատման հարցերում: Դա տեղի չունեցավ: Հայաստանն այդ հարկադրման քաղաքականությանը չենթարկվեց: Ավելին՝ սկսած 1998 թվականից, Հայաստանն առաջ քաշեց Ցեղասպանության ճանաչումը՝ որպես իր քաղաքականության առաջնային խնդիր, այսինքն՝ ակտիվորեն հակադրվեց Թուրքիայի հարկադրման քաղաքականությանը: Եվ այս պայմաններում Թուրքիան գնաց կոմպրոմիսի՝ հրաժարվեց իր այդ նախապայմաններից:

Ո՞րն էր դրա պատճառը: Թերեւս, առաջին հերթին այն, որ Հայաստանը չենթարկվեց հարկադրմանը: Կարելուր են նաեւ աշխարհաքաղաքական զարգացումները, որոնք տեղի ունեցան եւ տեղի են ունենում մեր տարածաշրջանում: Իհարկե, ամենակարելուրը ռուս-վրացական կարծատեւ պատերազմն էր, որի ընթացքում Ռուսաստանը կտրուկ ուժեղացրեց իր աշխարհաքաղաքական դիրքերը մեր տարածաշրջանում: Թուրքիան հույս ուներ ստեղծել մի առանցք՝ Թուրքիա – Վրաստան – Ադրբեջան, որը պատերազմից հետո փլուզվեց դիվանագիտական առումով: Վրաստանը՝ որպես աշխարհաքաղաքական գործոն, գրեթե դադարեց գոյություն ունենալուց: Այսինքն՝ Թուրքիայի քաղաքականության այդ ուղղությունը, որի նպատակն էր մեկուսացնել Հայաստանը, ըստ էության, ձախողվեց: Արդյունքում՝ մեր տարածաշրջանում ուժեղացան Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքը եւ նշանակությունը: Թուրքիան հայտնվեց տարածաշրջանում իր ազդեցությունը կորցնելու ռեալ վտանգի առջեւ:

Երկրորդը կապված է այն նոր քաղաքական գծի հետ, որը մշակվեց Թուրքիայում վերջին մեկ-երկու տարիների ընթացքում: Սկսած 2004 թվականից, Եվրամիությունը Թուրքիայի առջեւ խնդիր է դրել՝ կարգավորել հարաբերությունները հարեւանների հետ: Եվ դա դիտարկվում է որպես կարելուրագույն նախապայման միությանն անդամակցելու համար: Թուրքիան ամեն կերպ խուսափում էր այս խնդիրը լուծելուց: Բայց հիմա մենք տեսնում ենք, որ, մասնավորապես, Դավութօղլուի արտգործնախարար դառնալուց հետո Թուրքիան քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ: Հայտնի այն ծրագիրն է առաջ քաշվել, որը կոչվում է «զրո պրոբլեմ» հարեւանների հետ, որի հեղինակը ինքը՝ Դավութօղլուն է:

Մյուս կողմից, Թուրքիան չի սահմանափակվում միայն Եվրամիության պահանջները կատարելով, փորձում է ստանձնել ակտիվ դերակատարում ներազդելու Եվրոպայի վրա: Այս առումով պարզորոշ նկատվում է, որ Թուրքիան իր առջեւ նպատակ է դրել դառնալ Եվրոպայի համար էներգետիկ բաշխիչ կենտրոն:

Միաժամանակ, Թուրքիան փորձում է ավելի լուրջ աշխարհաքաղաքական նպատակներ դնել իր առջեւ: Եվ այս պայմաններում, թերեւս, լուրջ

վերագնահատում տեղի ունեցավ Թուրքիայի եւ Ադրբեջանի հարաբերությունների ոլորտում: Թուրքական վերնախավը, համեմայնդեպս, ղեկավար գործիչների այն խումբը, որոնք կենտրոնացած են վարչապետ Էրդողանի շուրջ, փորձում են նոր քաղաքականություն մշակել, որի հիմքում դրվում է հետեւյալ իրողությունը՝ պետք է վեր կանգնել Ադրբեջանի հետ հատուկ հարաբերություններից: Ադրբեջանը Թուրքիայի համար այլեւս միակ նպատակը չէ այս տարածաշրջանում: Թուրքիան ունի ավելի մեծ, ավելի հեռուն գնացող կարելոր նպատակներ, եւ այս ճանապարհին պատրաստ է զոհաբերել, որոշ չափով՝ իհարկե, իր հատուկ հարաբերություններն Ադրբեջանի հետ: Փաստորեն, այս էր այն աշխարհաքաղաքական հիմնական մթնոլորտը, որը հանգեցրեց Թուրքիայում տեղի ունեցող վերագնահատումներին արտաքին քաղաքականության ոլորտում:

Մեկ հանգամանք եւս: Փաստորեն, այնպես ստացվեց, որ Ռուսաստանի եւ Ամերիկայի շահերը համընկան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոլորտում: Մասնավորապես, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության հայտարարությունում արձանագրությունները բնութագրվում են որպես շատ լուրջ փաստաթղթեր: Կարելի է ասել, որ ներկա պահին աշխարհաքաղաքական մթնոլորտը բարենպաստ է՝ հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու համար, ընդ որում, կարգավորելու այն սկզբունքների հիման վրա, որոնք, հիմնականում, առաջ են քաշվել մեր դիվանագիտության կողմից. այսինքն՝ նախապայմաններից զերծ սկզբունքների հիման վրա:

Արձանագրություններն, իհարկե, արդյունք են կոմպրոմիսի: Դա նկատվում է անզեն աչքով: Մեզանից շատերը, քննադատելով արձանագրությունները, հիմնվում են այդ կոմպրոմիսի արդյունքների վրա: Սակայն նայենք այս փաստաթղթերին նրանց աչքերով: Թուրքական լրատվամիջոցներում օրական լինում են տասնյակ հրապարակումներ, որտեղ քննադատվում են այս փաստաթղթերը: Հեղինակները հանդես են գալիս հայտարարություններով, որ, փաստորեն, կառավարությունը վաճառեց Թուրքիայի ազգային շահերը, իր դաշնակից Ադրբեջանին:

Այս բազմաթիվ հրապարակումներից կարելի է ընտրել մեկը, որը, թերեւս, ամենակարեւորն է: Հեղինակն է Դենիզ Բայքալը՝ Թուրքիայի քաղաքականության վետերանը, որն առաջին անգամ նախարար եղավ դեռեւս 40 տարի առաջ՝ Էջեփի կառավարության մեջ, որը ներկայումս ղեկավարում է Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը՝ խորհրդարանում ներկայացված հիմնական ընդդիմադիր կուսակցությունը, որն, ըստ էության, «քենալիզմի» ներկայացուցիչն է Թուրքիայում (այսինքն՝

այն գաղափարախոսության, որի հիմքի վրա ստեղծվել է արդի թուրքիան) եւ ունի բազմաթիվ կողմնակիցներ բարձրագույն զինվորականության շրջանում: Նրա հետ հանդիպում ունեցավ արտգործնախարար Դավթթօղլուն, եւ հանդիպումից հետո Դենիզ Բայքալն այս արձանագրությունները բնութագրեց որպես «հայկական ծուղակ»:

Ինչո՞ւ է նա դա համարում «հայկական ծուղակ»: Ըստ նրա՝ «Թուրքիան 4 խնդիր ունի Հայաստանի հետ: Առաջինը՝ իրավական տեսակետից անորոշություն կա. Հայաստանը Կարսի պայմանագիրը չի ճանաչում: Երկրորդը՝ Հայաստանը գրավել է Ադրբեջանի տարածքը: Երրորդը՝ Ցեղասպանության մասին պնդումների միջոցով Հայաստանը Թուրքիային ստորացնող քաղաքականություն է վարում: Եվ չորրորդը՝ սահմանը փակ է»: Ուրեմն այս 4 խնդիրներն են, որոնք, ըստ Դենիզ Բայքալի, ծառայած են Թուրքիայի առջեւ հայ-թուրքական հարաբերություններում: Այնուհետեւ նա շարունակում է. «Թուրքիան պետք է այդ խնդիրները լուծի: Սակայն արձանագրությունները միայն մեկ խնդիր են լուծում՝ սահմանների բացումը: Մնացած խնդիրները պահպանվում են: Մենք դեմ ենք, որ մինչեւ դրանց լուծումը պայմանագրերը ստորագրվեն: Սակայն կառավարությունն արդեն որոշում է ընդունել: Սա ծուղակ է: Ստորագրումից հետո սահմանը կբացվի, իսկ Թուրքիայի մնացած պահանջները կմնան դատարկ խոսքեր»:

Ուրեմն, այս է Թուրքիայի քաղաքական վերնախավի մի մասի գնահատականը երկու արձանագրություններին: Անշուշտ, մեր հասարակության մեջ էլ քիչ չեն մարդիկ, որոնք այս փաստաթղթերը համարում են թուրքական ծուղակ՝ որ Թուրքիան մեզ խաբեց, որ մենք մեր բոլոր խնդիրներում տանուլ ենք տալիս եւ այլն: Ինչի՞ մասին է սա խոսում. այն մասին, որ իսկապես տեղի է ունեցել կոմպրոմիս: Եվ այդ կոմպրոմիսին հաջողվել է հասնել՝ չզոհաբերելով մեր ազգային շահերը:

Առհասարակ, մեր հասարակությունը դժվարությամբ է փորձում ընտելանալ այն հանգամանքի հետ, որ մենք կարող ենք ունենալ հաջող դիվանագիտություն: Փորձենք նայել մեր պետությանը առարկայական դիրքերից: Նախ՝ կա երեք հանգամանք, որոնք Հայաստանին բացառիկ դիրք են հաղորդում մեր տարածաշրջանում: Առաջին՝ Հայաստանը մեր տարածաշրջանի միակ երկիրն է, որն անկախացումից ի վեր չկորցրեց իր տարածքային ամբողջականությունը, ի տարբերություն Վրաստանի եւ Ադրբեջանի: Իսկ տարածքային ամբողջականությունը կորցնելը համարվում է պետականության կայացման ամենակարեւոր բացը: Երկրորդ՝ Հայաստանը միակ երկիրն է մեր տարածաշրջանում, որը մաս է կազմում անվտանգության համակարգի՝ ՀԱՊԿ-ի. ոչ Վրաստանը, ոչ Ադրբեջանը

նման համակարգերի մաս չեն կազմում, այսինքն՝ ոչ մի ռազմաքաղաքական կազմակերպություն պարտավոր չէ նրանց պաշտպանել: Եվ երրորդ՝ Հայաստանում տեղակայված է ռուսական բավական լուրջ ռազմակայան: Ռուսաստանի՝ մեր ստրատեգիական, ռազմական դաշնակիցը լինելու հանգամանքը, մասնավորապես, դրսևորվեց 1992–1993 թվականներին, երբ Թուրքիան փորձեց վախեցնել Հայաստանին: Ռուսաստանի արձագանքը համարժեք էր. եթե Թուրքիան նման բան կատարի, դա կլինի երրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը: Այնպես որ, թուրքերը, գնալով զիջումների, իրենց տեսակետից, հաշվի են առել նաև այս հանգամանքը: Ահա մրցակցային այս առավելություններն են, որ մեզ թույլ են տալիս վարել մրցունակ դիվանագիտություն եւ առաջ տանել մեր ազգային-պետական շահերը:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՑՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան

Վերլուծելով Թուրքիայի Հանրապետության ներքին քաղաքականության որոշակի դրսևորումներ՝ կարող ենք նշել, որ դրանք, մեծ մասամբ, կրում են համատարած թուրքացման բնույթ: Նորաստեղծ Թուրքիայում տեղի էին ունենում տարատեսակ գործընթացներ, որոնք միտված էին միատարր թուրքական պետության ստեղծմանը: Այս գործընթացը անխուսափելիորեն պետք է անդրադառնար նաև տեղանուններին, քանի որ Օսմանյան կայսրության տարածքում բազմաթիվ էին բնիկ ժողովուրդների լեզուներով անվանակոչված վայրերը, որոնք ուղղակի ապացույցն էին նրանց ներկայության: Տեղանունները, միեւնույն ժամանակ, ցույց են տալիս պատմական անցյալը, այդտեղ բնակված ժողովրդի պատմության, մտածելակերպի մի շարք մանրամասներ: Այդ է պատճառը, որ միատարր Թուրքիայի Հանրապետության կայացման գործընթացում տեղանունների թուրքացմանը վերապահվել էր կարևոր գործառույթ:

Ինչպես ընդհանրապես թուրքացման քաղաքականությունը, այնպես էլ դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող տեղանունների թուրքացումը, նոր երևույթ չէր եւ սկսվել էր ավելի վաղ: Սակայն այդ քաղաքականությունն ավելի ընդգծված եւ համակարգված բնույթ ստացավ 19-րդ դարի կեսերից, որն ավելի խորացավ երիտթուրքերի տիրապետման ժամանակ:

Քեմալական Թուրքիայում տեղանունների փոփոխության առաջարկներ արվեցին դեռևս 1920-ականների սկզբներին: 1922թ. անվանափոխվել են որոշ հայկական տեղանուններ, որոնք մինչ այդ էլ արդեն ենթարկվել էին աղավաղման, մասնավորապես՝ Մուքյուս անվանակոչված պատմական Մոկսը վերանվանվել եւ այսօր էլ կոչվում է Բահչեսարայ: 1928թ. անվանափոխվել եւ թուրքացվել են Էգեյան ավազանի հունական եւ Թուրքիայի հարավարեւելյան շրջանների հայկական տեղանունները: Սակայն անվանափոխության ավելի լայն գործընթացը սկիզբ է առել 1940թ., երբ Թուրքիայի Ներքին գործերի նախարարությունը հրապարակել է թիվ 8589 շրջաբերականը, որտեղ հստակ նշվում է «օտար լեզուներից եւ արմատներից ծագող եւ գործածման մեջ թյուրընկալումների պատճառ հանդիսացող բնակավայրերի եւ տեղանունների» թուրքերեն

անվանումներով փոփոխման անհրաժեշտության մասին: Դրանից հետո նահանգապետարանների կողմից պատրաստվել եւ նախարարություն են ուղարկվել «օտարալեզու» տեղանունները: Ուշագրավ է նաեւ այս գործընթացի ժամանակաշրջանը՝ 1940-ականները, երբ Թուրքիայում տեղի էին ունենում թուրքացման լայնածավալ գործընթացներ (օրինակ՝ տնտեսության), ոչ մուսուլման բնակչության հանդեպ տարատեսակ խտրականությունների կիրառում:

Տեղանունների թուրքացման կոնկրետ կիրառումը սկսվում է 1957թ., երբ հատուկ դրա համար ստեղծվում է «Տեղանունների փոփոխության մասնագիտական հանձնաժողով», որի մեջ ընդգրկվում են գլխավոր սպայակույտի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, պատմաաշխարհագրական ֆակուլտետների եւ «Թուրքական լեզվական ընկերության» ներկայացուցիչներ: Այստեղ եւս մի ուշագրավ նրբություն կա, այն է, որ չնայած այդ ժամանակահատվածում Թուրքիայում փոխվել էր իշխանությունը, սակայն թուրքացման քաղաքականության վրա դա որեւէ ազդեցություն չի ունեցել: Հիշյալ հանձնաժողովն աշխատել է մինչեւ 1978թ., որի ընթացքում ուսումնասիրվել են շուրջ 75 հազար տեղանուն եւ անվանափոխվել դրանցից 28 հազարը: Թուրք հետազոտող, Եփրատ համալսարանի դոցենտ Հարուն Թունչելը պնդում է, որ անվանափոխվել են ավելի քան 12 հազար գյուղերի անուններ, որոնք կազմում են ընդհանուր Թուրքիայի գյուղերի շուրջ 35 տոկոսը: Թունչելը պատրաստել է նաեւ անվանափոխված գյուղերի ցուցակը եւ դրանց քանակական բաշխումն ըստ նահանգների, որը ներկայացնում ենք ստորեւ.

<i>Նահանգի անունը</i>	<i>Գյուղերի թիվը</i>	<i>Նահանգի անունը</i>	<i>Գյուղերի թիվը</i>
Ադանա	169	Իզմիր	68
Ադըյաման	224	Կարս	398
Աֆիոն	88	Կաստամոնու	295
Ադրը	374	Կեսարիա	86
Ամասիա	99	Քըրըքլարելի	35
Անկարա	193	Քըրշեհիր	39
Անթալիա	168	Քոջաելի	26
Արդվին	101	Կոնիա	236
Այդըն	69	Քյութահյա	93

Բալլըքեսիր	110	Մալաթիա	217
Բիլեջիք	32	Մանիսա	83
Բինգյոլ (Ճապաղջուր)	247	Մարաշ	105
Բիթլիս	236	Մարոփն	647
Բոլու	182	Մուղլա	70
Բուրդուր	49	Մուշ	297
Բուրսա	136	Նևշեհիր	24
Չանաքքալե	53	Նիդդե	48
Չանքըրը	76	Օրդու	134
Չորում	103	Ռիզե	105
Ղենիզլի	53	Սաքարիա	117
Ղիարբեքիր	555	Սամսուն	185
Էդիրնե	20	Սիիրթ (Սդերթ)	392
Էլյազիզ (Խարբերդ)	383	Սինոպ	59
Էրզինջան (Երզնկա)	366	Սեբաստիա	406
Էրզրում	653	Թեքիրդաղ	19
Էսքիշեհիր	70	Թոքաթ (Եվրոկիա)	245
Գազիանթեփ	279	Տրապիզոն	390
Գիրեսուն	167	Թունջելի (Ղերսիմ)	273
Գյումուշհանե	343	Ուրֆա	389
Հաքքարի	128	Ուշաք	47
Հաթայ	117	Վան	415
Սպարտա	46	Յոզղաթ	90
Իչել	112	Զոնգուլդակ	156
Ստամբուլ	21	<i>Ընդամենը՝</i>	<i>12211</i>

Ներկայացված ցուցակից ակնհայտ է դառնում, որ ամենաշատը տեղանունները փոխվել են Թուրքիայի արեւելյան, հարավարեւելյան եւ սեւծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական Հայաստանում, ինչպես նաեւ հունական տարածքներում: Թունջելի գնահատմամբ՝ հանձնաժողովն ուշադրություն է դարձրել, որ պարտադիր փոփոխվեն այն

տեղանունները, որոնց բաղադրիչներից են *կարմիր, զանգ, եկեղեցի* բառերը, որոնք բացահայտ ցույց են տալիս դրանց ոչ թուրքական կամ ոչ մուսուլմանական ծագումը, իսկ *կարմիր* բառն ուներ նաև կոմունիստական երանգ: Ի դեպ, Թուրքիայի վարչապետ Էրդողանի ծննդավայրը Ռիզեի նահանգի Գյունեյսու գավառն է, որը մինչև այժմ էլ ժողովրդի շրջանում անվանվում է իր նախկին՝ ակնհայտ ոչ թուրքական անունով՝ Պոտոմիա:

Ներկայումս Թուրքիայում բավական ակտիվ քննարկվում է տեղանունների փոփոխման գործընթացը, եւ այս քննարկումներին մասնակցում են երկրի բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչները՝ իհարկե, փորձելով այս գործընթացում իրենց քաղաքական հաշվարկներն ու շահերը մտցնել: Այսպես, բոլորովին վերջերս Թուրքիայի նախագահ Գյուլը արեւելյան շրջաններ կատարած այցի ժամանակ, մի հանդիպմանը հայտարարել է, որ ներկայումս Գյուլոյմաք անվանված գավառի անունն իրականում Նորշեն է: Նրանից հետո չի մնացել նաև վարչապետ Էրդողանը՝ նշելով, որ Մանազկերտը հայերեն բառ է: Այս ամենը դարձել է նաև ներքաղաքական խնդիր եւ առիթ տվել ընդդիմությանը քննադատել իշխանություններին: Այս հարցում, ինչպես միշտ, ակտիվ է Ազգայնական շարժում կուսակցությունը, որի ղեկավար Դեւլեթ Բահչելիի եւ վարչապետ Էրդողանի միջև սկիզբ է առել հեռակա բանավեճ: Մասնավորապես Դեւլեթ Բահչելին, մեղադրելով իշխանություններին, հեզնել է, թե միգրացի փոխենք նաև Ստամբուլի անունը եւ այն կոչենք Կոստանդնուպոլիս:

Հարկ է նշել, որ անվանափոխությունները չեն շրջանցել նաև Ստամբուլը, որտեղ հիմնական շեշտը դրվել է «օտարահունչ» փողոցների անվանափոխության վրա: Ստամբուլում փողոցների անվանումների թուրքացումը սկսվել է 1927թ., եւ հիմնական թիրախներն են եղել հունական, հայկական թաղամասերը: Պետք է ասել, որ Ստամբուլի փողոցների եւ թաղամասերի անվանափոխման մեջ որոշակի միտումներ ակնհայտ են. մասնավորապես այն թաղամասերում, որտեղ ավելի հոծ ապրում են հայեր, հույներ, գերիշխում են ազգայնամոլական տեղանուններ կամ, այսպես կոչված, «սիմվոլիկ սպառնալիք» պարունակող անվանումներ: Այստեղ հարկ ենք համարում խոսում օրինակ բերել. մի պոլսահայ, անդրադառնալով Ստամբուլի որոշ փողոցների եւ թաղամասերի անվանափոխման խնդրին, պատմել է. «Ես ապրում եմ *Քուրթուլուշում*, տունս *Էրզենեքոն* թաղամասում է՝ *Թուրքբեյ* փողոցում, քվեարկելու համար գնում եմ *Թալեսաթ* փաշայի անվան դպրոց»: Ըստ ներկայումս կատարվող

հետազոտությունների առաջին արդյունքների, Ստամբուլում մինչև 1954թ. թուրքացվել է շուրջ 100 փողոցի եւ թաղամասի անվանում:

Հարկ է նշել, սակայն, որ չնայած թուրքական պետության գործադրած ջանքերին՝ մինչեւ օրս էլ որոշ հայկական տեղանուններ շարունակում են գործածվել իրենց հին՝ թեկուզ եւ աղճատված, ձեւերով: Օրինակ՝ Մուշի Ցրոնք գյուղը (անվանափոխված է Քըրքոյ) ժողովուրդը ներկայումս էլ կոչում է Սրոնք, Հացեկացը՝ Հասիկ, եւ նման օրինակները բազմաթիվ են: Սա ցույց է տալիս, որ հասարակ ժողովուրդը դեռ չի յուրացրել նոր անվանումները, եւ, միեւնույն ժամանակ, հայկական տեղանունների շարունակվող կիրառման մեջ պատմական հիշողության տարրեր կան:

ԱՄՆ-Ի ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ *Արեստակես Սիմավորյան*

ԱՄՆ-ի հայ կաթոլիկները

Ներկայումս ԱՄՆ-ում հաշվվող մեկ միլիոնից ավելի հայության մաս են կազմում նաեւ երեսուներեք հազար հայ կաթոլիկները:

19-րդ դարի սկզբին աշխատանք փնտրելու նպատակով Արեւմտյան Հայաստանից ԱՄՆ է գաղթել Օսմանյան կայսրությունում ապրող հայ կաթոլիկների մի հատված՝ հիմնականում Էրզրումի գյուղերից, Կ.Պոլսից, Մարդինից եւ այլ վայրերից: Նույն դարի վերջին այստեղ են հաստատվում նաեւ համիդյան ջարդերից մազապուրծ հայերը, որոնք կենտրոնանում են մի շարք քաղաքներում, մասնավորապես՝ Նյու Յորքում: 1896թ. հայ կաթոլիկներին քահանայելու նպատակով Ազարյան պատրիարքի պահանջով այստեղ է ուղարկվում Հայ կաթողիկե քահանա Մկրյանը, ով հետագայում կազմակերպեց նաեւ Ցեղասպանության տարիներին Ամերիկա ապաստանած եւ ցիրուցան եղած հայ կաթոլիկների համայնքը:

Սակայն Նյու Յորքը միակ քաղաքը չէր, որտեղ կային հայ կաթոլիկներ. հետեւելով վերջինիս օրինակին՝ մշակութային եւ հասարակական կյանքը կազմակերպելու նպատակով ստեղծվեցին եւս մի քանի համայնքներ՝ Նյու Ջերսիում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Դեթրոյտում, Կալիֆոռնիայում: Այս կարեւոր նախաձեռնությունը, չնայած կրթական հաստատությունների եւ սեփական եկեղեցու բացակայությանը, հնարավորինս կասեցրեց հետագայում մեծ չափերի հասնող ձուլման գործընթացը:

Կրթական հաստատությունները գլխավորապես հիմնվեցին այն քաղաքներում, որտեղ հայ կաթոլիկները մեծամասնություն էին կազմում: Ֆիլադելֆիայում եւ Բոստոնում հիմնվեցին Հայ քույրերի վարժարանները, որտեղ համատեղ կրթվում էին հարյուրավոր երեխաներ: Հետագայում նույն վարժարանին պատկանող մի հաստատություն էլ սկսում է գործել Լոս Անջելեսում: Հայապահպանության խնդիրներով մտահոգ էր նաեւ Մխիթարյան միաբանությունը, որի նպատակաուղղված ջանքերի շնորհիվ Լոս Անջելեսում հիմնվեց Մխիթարյան վարժարանը:

Համայնքի ներքին կյանքին ավելի կազմակերպված տեսք տալու համար 1981թ. Հայ կաթողիկե Եպիսկոպոսների սինոդի եւ Հովհաննես Պողոս Բ պապի հաստատումով, հիմնվում է Հյուսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկե Էքզարքությունը:

Նորանշանակ եպիսկոպոս Ներսես Սեթյանը կարողացավ մնալուև կապեր հաստատել ԱՄՆ-ում եւ Կանադայում ցաքուցրիվ եղած հայ կաթոլիկների հետ: 1983թ. Նյու Յորքը վերջնականապես դառնում է հայ կաթոլիկների արքեպիսկոպոսարան, կարդինալ Թերնս Կուկի կողմից համայնքին տրամադրվում է Մանհեթեն թաղամասի Ար. Աննա եկեղեցին, որը հետագայում վերանորոգվեց տեղի հայ բարերարների կողմից:

Ներկայումս Ար. Աննայի ժողովրդապետությունում հաշվվում է շուրջ 200 ընտանիք, թեւ ճայ կաթողիկեի տվյալներով՝ մոտ հազարի հասնող ընտանիքներ են բնակվում Նյու Յորքի տարբեր թաղամասերում: Այս ցաքուցրիվ վիճակը դժվարացնում է եպիսկոպոսարանի աշխատանքը, քանի որ ֆինանսական պայմանները հնարավորություն չեն տալիս յուրաքանչյուր թաղամասում եկեղեցի կառուցել: Շատերը ստիպված են լինում հաճախել Լատին կամ էլ ճայ Առաքելական եկեղեցի:

ճայ կաթոլիկների առավել մեծ հոսք ԱՄՆ եւ Կանադա նկատվեց Մերձավոր Արեւելքի հայկական գաղթօջախներից՝ Լիբանանից եւ Սիրիայից, 1970-ական թթ. եւ հետագա տարիներին: ճամայնքներն ստվարացան նաեւ տնտեսական ճգնաժամի պատճառով Արգենտինայից հեռացած եւ ԱՄՆ արտագաղթած հայերով: Սիւնույն ժամանակ, ԱՄՆ տարածքում հայ կաթոլիկների տեղաշարժերը եւ նորահաստատ խմբերը ստեղծեցին համայնքներ Սան Ֆրանցիսկոյում, Սան Դիեգոյում, Չիկագոյում, Վաշինգտոնում, Ատլանտայում, Մայամիում եւ Ինդիանապոլիսում:

Առհասարակ, հայ կաթոլիկ համայնքների մեծագույն խնդիրը հոգեւորականության պակասն է: Նույն խնդիրն ի հայտ է գալիս նաեւ ԱՄՆ-ում, եւ վերոհիշյալ քաղաքների հայ կաթոլիկների հոգեւոր պահանջները կատարում են մերձակա շրջանների քահանաները, ինչը բնականաբար արդյունավետ չէ՝ հաշվի առնելով, որ այցելություններն այդ քաղաքներ մշտական բնույթ չեն կրում:

2005 թվականին, Ճոնի պապ Բենեդիկտ 16-րդի՝ սեպտեմբերի 12-ի որոշմամբ ԱՄՆ-ի եւ Կանադայի հայ կաթոլիկ համայնքների (Armenian Catholic Exarchate of the USA and Canada) կարգավիճակը բարձրացվեց անկախ թեմի՝ եպարքության: Այն մոտավորապես պետք է սպասարկեր ԱՄՆ-ի 35.000 եւ Կանադայի 10.000-անոց հայ կաթոլիկ համայնքները: Թեմի առաջնորդ դարձավ Մանուել Եպս. Բատիկյանը:

Տարբեր քաղաքներում բնակվող հայ կաթոլիկ համայնքների ներկայիս հոգեւոր եւ մշակութային խնդիրները լուսաբանելու, միմյանց իրազեկելու համար անհրաժեշտ համարվեց ստեղծել ամսագրեր: Թվաքանակով խոշոր որոշ համայնքների եկեղեցականներ եւ աշխարհիկ նվիրատուներ

կարողացան հաջողությամբ պսակել այդ գործը: Այսօր ԱՄՆ-ի հայ կաթոլիկների համար հրատարակվում են մեկ տասնյակի հասնող հայերեն եւ անգլերեն պարբերաթերթեր:

Ամերիկյան սոցիալ-մշակութային արեալում բնակվող հայ կաթոլիկները պարբերաբար հետամուտ են սեփական կազմակերպություններ ստեղծելուն: Ստեղծվել են երիտասարդական եւ տիկնամց միություններ, դրանց կողքին գործում են նաեւ երգչախմբեր եւ այլ խմբակներ: Այդ երկրում անցկացվող համահայկական մշակութային ցանկացած միջոցառման իրենց մասնակցությունն են բերում նաեւ հայ կաթոլիկները:

Ուշագրավ է, որ ամերիկահայերի վերաբերյալ ԱՄՆ կառավարության 2004թ. կատարած ուսումնասիրության մեջ նաեւ տեղ է հատկացվել հայ կաթոլիկներին, որտեղ մասնավորապես նշվում է. «Միացյալ Նահանգներում ապրող հայ կաթոլիկները փոքր մասն են կազմում ամերիկահայ համայնքի (մոտ 35 հազար անդամով): 1990-ականների վերջերին սոցիալ-ժողովրդական կառույցներն ընդարձակելու եւ ամրապնդելու ջանքերը տվեցին դրական արդյունքներ, եւ խմբավորումն այժմ առավել լավ է կազմակերպված: Հետամուտ է քաղաքական եւ սոցիալական բնագավառներում առավելապես պահպանողական արժեքների պահպանմանը, որոնք համապատասխանում են Լիբանանում գտնվող Հայ կաթոլիկների պատրիարքության պահանջներին»: Ըստ ուսումնասիրության՝ Մ. Նահանգներում գործում են Հայ կաթոլիկների 10 ժխական կենտրոններ, որոնք գտնվում են Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Բոստոնում եւ Նյու Ջերսիում:

Կանադայի հայ կաթոլիկները

Կանադայի հայ կաթոլիկ համայնքը մտնում է Հյուսիսային Ամերիկայի թեմի մեջ եւ վերջինիս հետ միասնաբար է գործում: Կանադայում հայերի զանգվածային հաստատման շրջանը, իրավամբ, կարելի է համարել 1895-1915 թվականները: Այդ թվականների հայտնի իրադարձություններից հետո Հայ օգնության միության միջոցով այս երկիր տեղափոխվեցին հարյուրավոր որբեր եւ տեղավորվեցին Օնտարիոյում: Հայ կաթոլիկների փոքրաթիվ առաջին խմբերը Քվեբեկում հաստատվեցին Կանադային սահմանակից ԱՄՆ Փենսիլվանիա նահանգից: Նրանց մեծ մասը սերում էր Մարդինի հայ կաթոլիկներից, որոնք փորձում էին աշխատանք փնտրել հանքավայրերում:

Կանադայի Հայ կաթողիկե համայնքը հիմնականում կենտրոնացված է Տորոնտո եւ Մոնրեալ քաղաքներում: Մինչեւ Հյուսիսային Ամերիկայի

էքզարքության հիմնվելը 1981թ., Կանադայի հայ կաթոլիկները մշտապես կախում ունեին տեղի Լատին արքեպիսկոպոսից:

Սկզբնական շրջանում Մոնրեալի ժողովրդապետության մեջ մտնող հայ կաթոլիկները կազմում էին շուրջ երեք հարյուր ընտանիք, մեծ մասամբ գաղթած Մերձավոր Արևելքից: Հետագայում այստեղ տեղափոխվեցին նաև Եգիպտոսի հայ կաթոլիկները: Ներկայումս այստեղ ապրում է հազար ընտանիք՝ հայախոս, արաբախոս, ֆրանսախոս, որոնք գործում են մերթ զուգահեռաբար, մերթ միասնաբար, բայց միշտ համագործակցելով տեղի քահանայի հետ: Քանի որ հայ կաթոլիկ խմբերը տարբեր լեզուների կրողներ են, քահանաներն ստիպված են իրենց իմացած լեզվով պատարագներ մատուցել համայնքապատկան Տիրամայր Նարեկի եկեղեցում:

1991թ. Մոնրեալում հիմնվեց Հայ կաթողիկե միություն, որին կից սկսեցին գործել գրական եւ թատերական խմբեր: Կանադայի տարբեր քաղաքներում սփռված հայ կաթոլիկների խնդիրներին ավելի մոտ կանգնելու նպատակով հիմնվեց նաև հոգեւոր հանձնախումբ: Իսկ երիտասարդության կրթադաստիարակչական գործունեության համար, բացի վարժարաններից, սկիզբ դրվեց նաև սկաուտությանը, որը բավական մեծ տարածում ունի Սփյուռքի բոլոր հատվածներում: Իսկ արաբախոսների եւ ֆրանսախոսների համար առանձին ստեղծվեցին կանանց եւ պատանիների խմբեր: Վերջին մի քանի տարիներին կատարված հսկայական աշխատանքների շնորհիվ, Մոնրեալի հայ կաթողիկե հասարակությունն ավելի կազմակերպված համայնքի տեսք ստացավ՝ համախմբելով իր շուրջը բազմաթիվ հայերի եւ ներգրավելով համայնքի մշակութային եւ հասարակական կյանքին:

Կանադայի երկրորդ մեծ համայնքը Տորոնտոն է: 1960-ական թվականներին Տորոնտոյում բնակվում էին տասնյակ հայ կաթոլիկ ընտանիքներ, որոնք տակավին կազմակերպված չէին, սակայն մշտապես Միացյալ Նահանգների եւ Կանադայի թեմի ուշադրության կենտրոնում էին: Կազմակերպչական նախահիմքերը դրվեցին վարդապետ Էդուարդ Գորդիկյանի շնորհիվ, ով հանձն առավ սատար կանգնել քաղաքի սակավաթիվ ընտանիքներին: 1970-ական թվականներին Տորոնտոյի հայ կաթոլիկ ընտանիքների թվաքանակը հասավ երեսունի: Ներկայումս նրանց թիվը կազմում է 250. այս արագ աճի հիմնական պատճառը ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Լիբանանից, ինչպես նաև Թուրքիայից (մի փոքր խումբ) արտագաղթն է: Դրան նպաստեցին երկրի տարածքում հայ կաթոլիկների տեղաշարժերը, նաև դավանակից հայրենակիցների հետ մի միջավայրում բնակվելու ցանկությունը:

Ինչպես եւ մնացած համայնքներում, այստեղ եւս ստեղծվեցին տարբեր կենտրոններ՝ ծխական խորհուրդներ, կիրակնօրյա վարժարաններ: Ավելորդ չէ նշել, որ ուսումնական կենտրոնները բացառապես ֆինանսավորվում են նահանգային կառավարության կողմից՝ հետեւելով կրթության նախարարության ծրագրերին:

Համայնքի ներկայացուցիչների հանգանակության շնորհիվ 1993թ. Հայ կաթողիկե հասարակությունն ունեցավ նաեւ իր եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը: Այս կարելու քայլը նպաստեց, որ հայ կաթոլիկներն այլեւս չայցելեն Լատին եկեղեցի, որտեղ ծխական արարողությունները կատարվում էին լատիներենով (թեեւ առանձին դեպքերում հայ քահանաներն այդ եկեղեցում հայերենով եւ ֆրանսերենով կատարում էին պատարագներ):

Բացի վերոհիշյալ քաղաքներից, հայ կաթոլիկների առանձին խմբեր հաստատվեցին նաեւ Կանադայի այլ վայրերում, որի արդյունքում ձեւավորվեցին Վանկուվերի, Էդմոնտոնի, Քվեբեկ Սիթիի, Օտտավայի փոքրաթիվ համայնքները: Գլխավոր խնդիրը կրկին քահանաների բացակայությունն է:

Թեեւ հայ կաթոլիկներն ամերիկյան եւ կանադական հանրությունում ներկայանում են որպես առանձին համայնք, այդուհանդերձ, չեն մեկուսանում Հայության մյուս դավանական հատվածներից եւ բարիդրացիական հարբերությունների մեջ են նրանց հետ:

ԱՄՆ-ի եւ Կանադայի հայ կաթոլիկ համայնքների հետագա կենսունակությունը կախված է նաեւ նրանից, թե որքանով օգտակար կգործի Մխիթարյան միաբանությունը, որը տարեցտարի, հասկանալի պատճառներով, նահանջում է իր առաքելությունից:

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ–ԱՐԵՎՄՈՒՏՔ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բենիամին Պողոսյան

2003թ. «վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանը Չարավային Կովկասում ստանձնեց Արեւմուտքի թիվ մեկ դաշնակցի դերը՝ ձեռք բերելով ժողովրդավարության կղզյակի եւ պետական շինարարության տարբեր ոլորտներում արագ եւ հաջող բարեփոխումներ իրականացնող պետության վարկանիշ: Այստեղ առաջին հերթին պետք է շեշտել Բուշի վարչակազմի անվերապահ աջակցությունը Վրաստանի նոր իշխանություններին, որն արտահայտվում էր թե՛ տնտեսական, թե՛ ռազմական եւ թե՛ քաղաքական մեծածավալ օժանդակության տրամադրմամբ: ԱՄՆ–Վրաստան հարաբերությունների սերտացման կարելուր վկայությունն էր 2005թ. մայիսի 10-ին Թբիլիսիում Ջորջ Բուշի ելույթը, որտեղ վերջինս Վրաստանն անվանեց «ազատության փարոս» տարածաշրջանի եւ նաեւ ողջ աշխարհի համար՝ շեշտելով, որ Վրաստանի օրինակը քաջալերել է հանուն ազատության պայքարող բազմաթիվ այլ ժողովուրդների:

Վրաստանում «վարդերի հեղափոխության» շնորհիվ իշխանության եկած ուժերը՝ նախագահ Սահակաշվիլու գլխավորությամբ, Վրաստանի արտաքին քաղաքական գլխավոր նպատակ հռչակեցին եվրատլանտյան կառույցներին, առաջին հերթին՝ ՆԱՏՕ-ին հնարավորինս արագ անդամակցումը՝ դրան ուղղելով պետության հիմնական ռեսուրսները: Սակայն հեղափոխությանը հաջորդած առաջին տարիներին Արեւմուտքում ձեւավորված համընդհանուր ոգեւորությունն աստիճանաբար սկսեց տեղի տալ ավելի իրատեսական գնահատականների: Զարաբերությունների վերինաստավորման փուլը սկսվեց, թերեւս, 2007թ. նոյեմբերին Թբիլիսիում տեղի ունեցած իրադարձություններից հետո, երբ իշխանություններն ուժ կիրառեցին ընդդիմության խաղաղ հանրահավաքի մասնակիցների նկատմամբ: Կողմերի միջեւ որոշակի լարվածություն ստեղծվեց նաեւ 2008թ. ապրիլին Բուխարեստում կայացած ՆԱՏՕ-ի զագաթածողովից հետո, երբ Զյուսիսատլանտյան դաշինքը որոշեց հետաձգել Վրաստանի հետ «Անդամակցության գործողությունների ծրագրի» (MAP) ստորագրումը:

Սակայն Վրաստան–Արեւմուտք հարաբերություններում կտրուկ փոփոխություն արձանագրվեց 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատե-

րազմից հետո: Նախ եւ առաջ դա արտահայտվեց եվրոպական առաջատար մի շարք երկրների՝ Վրաստանի հանդեպ դիրքորոշման փոփոխմամբ, որոնք ակնհայտորեն ոգեւորված չէին Սահակաշվիլու անհեռատես գործողությունների պատճառով Ռուսաստանի հետ հակասությունների մեջ մտնելու հեռանկարից: Պատահական չէ, որ օգոստոսյան պատերազմին հաջորդած Եվրամիության արտահերթ գագաթաժողովը մերժեց Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու առաջարկը, որի ջատագովներն էին արեւելաեվրոպական եւ բալթյան մի շարք երկրներ:

Ջորջ Բուշի վարչակազմը, ի տարբերություն եվրոպացիների, շարունակում էր Վրաստանին անվերապահ աջակցություն ցուցաբերելու քաղաքականությունը, որն արտահայտվեց ինչպես Վրաստանին շուրջ 1 միլիարդ դոլար օգնություն տրամադրելու որոշմամբ, այնպես էլ Վրաստան – ԱՄՆ ռազմավարական համագործակցության հռչակագրի մշակմամբ: Մի շարք ոլորտներում համագործակցության խորացմանը միտված հռչակագիրը Վաշինգտոնում ստորագրվեց 2009թ. հունվարի 9-ին՝ ԱՄՆ նորընտիր նախագահ Բարաք Օբամայի երդման արարողությունից ընդամենը մի քանի օր առաջ:

Իշխանության գալուց անմիջապես հետո Օբամայի վարչակազմը հայտարարեց, որ մտադիր է իրականացնել հռչակագրում նախանշված գործողությունները եւ շարունակել Վրաստանի հետ ռազմավարական համագործակցությունը: Սակայն ամերիկյան նոր իշխանությունների իրականացրած գործողությունները վկայում են, որ Վրաստան – ԱՄՆ հարաբերություններում այլեւս չկա Բուշի վարչակազմին բնորոշ «ջերմությունը»: 2009թ. հուլիսին Թբիլիսի կատարած պաշտոնական այցի շրջանակներում ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը, Վրաստանի խորհրդարանում ունեցած ելույթի ժամանակ, շեշտելով ԱՄՆ աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը եւ եվրաստլանտյան կառույցներին ինտեգրման քաղաքականությանը, հայտարարեց, որ Վրաստանի իշխանությունները պետք է ջանքեր գործադրեն «վարդերի հեղափոխության» ժամանակ տրված ժողովրդավարացման խոստումներն իրականացնելու ուղղությամբ: ԱՄՆ փոխնախագահը հստակ հայտարարեց, որ ժողովրդավարացման ճանապարհին Վրաստանը դեռեւս շատ անելիքներ ունի, այդ թվում՝ կառավարության գործունեության թափանցիկության եւ իշխանության գործադիր եւ օրենսդիր ճյուղերի միջեւ իրական հավասարակշռության ապահովում, ընտրական գործընթացների կատարելագործում, լրատվամիջոցների լիակատար ազատության եւ դատական իշխանության անկախության ապահովում, այդ համակարգում արտաքին ցանկացած ազդեցության բացառում եւ իշխանության փոխանցման խաղաղ,

սահմանադրական եւ ժողովրդավարական գործընթացի իրականացում:

ԱՄՆ փոխնախագահի այս հայտարարությունն զգալիորեն տարբերվում էր Բուշի վարչակազմի օրոք Վրաստանի իշխանությունների հասցեին հնչող բարձրագույն գովեստներից եւ լուրջ նախազգուշացում էր «վարդերի հեղափոխության» առաջնորդին այն մասին, որ ամերիկյան նոր վարչակարգը բավարարված չէ Վրաստանում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքով եւ այդ ուղղությամբ իրավիճակի բարելավմանն ուղղված լուրջ քայլերի ակնկալիք ունի:

ԱՄՆ – Վրաստան հարաբերություններում ձեւավորվող նոր երանգների վկայությունն էր նաեւ 2009թ. սեպտեմբերի 21-ին Նյու Յորքում ԱՄՆ պետքարտուղար Յիլարի Քլինթոնի հանդիպումը Միխեիլ Սահակաշվիլու հետ: Հանդիպման ընթացքում Քլինթոնը հայտարարել է, որ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի խնդիրները չունեն կարճաժամկետ լուծումներ, եւ Վրաստանը պետք է որդեգրի «ռազմավարական համբերության» քաղաքականությունը՝ քայլեր ձեռնարկելով երկրի ներսում իրավիճակի բարելավման ուղղությամբ, ինչը, երկարաժամկետ առումով, կարող է հիմք դառնալ Աբխազիային եւ Հարավային Օսիային՝ Վրաստանի կազմի մեջ վերադառնալու խնդրում շահագրգռելու համար: Միաժամանակ Քլինթոնը կրկին շեշտել է ժողովրդավարական բարեփոխումների խորացման անհրաժեշտությունը՝ նշելով, որ թեւեւ Վրաստանը 2004թ. սկսած զգալի ճանապարհ է անցել այդ ուղղությամբ, սակայն ճանապարհի մեծ մասը դեռեւս առջեւում է: ԱՄՆ պետքարտուղարը հատկապես առանձնացրել է ընտրական օրենսգրքի բարեփոխման, մամուլի հավելյալ ազատության, դատական համակարգի անկախության հիմնահարցերը: ԱՄՆ իշխանությունները Վրաստանի նախագահին հստակ ակնարկել են, որ միջնաժամկետ հեռանկարում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շուրջ ձեւավորված ստատուս քվոն չի փոխվելու, եւ իշխանություններն իրենց ուշադրությունը պետք է կենտրոնացնեն երկրի ներսում իրականացվող բարեփոխումների վրա, որտեղ դեռեւս առկա են լուրջ խնդիրներ:

Վրաստան – Եվրամիություն հարաբերություններում նկատվող լարվածության վերջին դրսեւորումներից է 2009թ. սեպտեմբերի 30-ին 2008թ. Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրմամբ զբաղվող միջազգային անկախ փաստահավաք առաքելության զեկույցի հրապարակումը: Առաքելությունը ձեւավորվել էր Եվրամիության խորհրդի՝ 2008թ. դեկտեմբերի 2-ի որոշմամբ: Դրա աշխատանքները զլխավորում էր շվեյցարացի դիվանագետ, Վրաստանում ՄԱԿ դիտորդական առաքելության նախկին ղեկավար Հայթի Տալյավինին: Ակնհայտ է, որ առաքելության եզրակացությունը չափազանց կարեւոր է առաջին հերթին

Վրաստանի իշխանությունների համար, որոնք ռուս-վրացական պատերազմին հաջորդած ամբողջ ժամանակահատվածում հսկայական ջանքեր էին գործադրում միջազգային հանրությանն ապացուցելու համար, որ լայնածավալ ռազմական գործողությունների մեկնարկի պատասխանատուն Ռուսաստանն է, եւ վրացական զինված ուժերի կողմից սկսված գործողությունները կրել են բացառապես ինքնապաշտպանական բնույթ: Սակայն այս հարցում եւս Վրաստանի իշխանություններին հիասթափություն էր սպասվում:

Ձեկույցում հստակ նշվում է, որ Հարավային Օսիայում Վրաստանի ռազմական գործողությունների իրականացումը, որոնք մեկնարկել են օգոստոսի 7-ի ուշ երեկոյան Ցխինվալի ռմբակոծումներով, չեն կարող արդարացվել միջազգային իրավունքի տեսակետից: Վրաստանը ստորագրել էր Հարավային Օսիայում ուժի կիրառումն արգելող մի շարք միջազգային պայմանագրեր, այդ թվում 1992թ. Սոչիում կնքված համաձայնագիրը: Նույնիսկ եթե ենթադրենք, որ վրացական կողմի ձեռնարկած գործողությունները հարավօսական խմբավորումների կողմից տարածաշրջանի վրացական գյուղերի դեմ իրականացված հարձակման պատասխանն են, միջազգային իրավունքի համաձայն, Վրաստանի գործողությունները պարտավոր էին համարժեք լինել: Սակայն ողջ գիշերվա ընթացքում վրացական զինված ուժերի կողմից Ցխինվալի ռմբակոծումները, այդ թվում «Գրադ» համակարգերի կիրառմամբ, միանշանակ չեն կարող համարվել որպես համարժեք գործողություններ: Ձեկույցում նշվում է, որ այդ իրավիճակում հարավօսական ուժերի կողմից ձեռնարկված պաշտպանական գործողությունները համապատասխանում են միջազգային իրավունքին՝ որպես ինքնապաշտպանության բնույթ կրող գործողություններ: Հարավօսական խմբավորումների գործողությունները դուրս են գալիս միջազգային իրավունքի շրջանակից միայն այն ժամանակ, երբ դրանք ուղղվում են ինչպես Հարավային Օսիայում, այնպես էլ նրա վարչական սահմաններից դուրս բնակվող էթնիկ վրացիների դեմ:

Ձեկույցը միջազգային իրավունքի տեսակետից անընդունելի է համարում նաեւ վրացական զինված ուժերի գործողությունները Հարավային Օսիայում տեղակայված ռուս խաղաղապահների դեմ, քանի որ նախքան վրացական հարձակումը սկսելը Ռուսաստանի կողմից զինված հարձակում չի եղել: Ձեկույցում նաեւ նշվում է, որ փաստահավաք առաքելությունը չի կարողացել ձեռք բերել նախքան օգոստոսի 7-ի ուշ երեկոյան Վրաստանի կողմից հարձակում սկսելը Հարավային Օսիայի տարածքում զգալի քանակությամբ ռուսական զինված ուժերի առկայության մասին վրացական պնդումներն ապացուցող փաստեր: Բավարար

ապացույցներ ձեռք չեն բերվել նաեւ պնդելու համար, որ ռուսական կողմը գտնվել է նման լայնածավալ հարձակում ձեռնարկելու նախաշեմին: Բացակայում են տեղեկություններն այն մասին, որ Հարավային Օսիայում տեղակայված ռուս խաղաղապահները կատարել են խաղաղապահ գործողությունների մանդատին հակասող գործողություններ: Ջեկույցում նշվում է, որ ռուս խաղաղապահների դեմ Վրաստանի կողմից ուժի կիրառումը հակասում է միջազգային իրավունքին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի ձեռնարկած ռազմական գործողությունների՝ միջազգային իրավունքին համապատասխանելիության խնդրին, ապա հարցին զեկույցում տարբերակված պատասխան է տրվում: Նշվում է, որ Ռուսաստանն իրավունք ուներ պաշտպանել ռուս խաղաղապահներին նրանց դեմ իրականացված հարձակումից, եւ այդ նպատակով ձեռնարկված գործողություններն օրինական են, սակայն հականարտույթյան երկրորդ փուլում, երբ Ռուսաստանի զինված ուժերի գործողությունները դուրս եկան Հարավային Օսիայի վարչական սահմանից, դրանք արդեն չէին տեղավորվում օրինական ինքնապաշտպանության շրջանակներում եւ միջազգային իրավունքի տեսակետից չեն կարող արդարացվել:

Եվրամիության փաստահավաք խմբի կողմից հրապարակված եզրակացությունը միանշանակ կերպով ռազմական գործողությունների մեկնարկ է համարում վրացական զինված ուժերի՝ օգոստոսի 7-ի ուշ երեկոյան Ցխինվալի դեմ իրականացված գործողությունները: Հերքվում է այդ դեպքերի առնչությամբ վրացական իշխանությունների օգտագործած քարոզչական հիմնական փաստարկը, որի համաձայն՝ վրացական կողմը ռազմական գործողություններ է սկսել բացառապես ինքնապաշտպանության նպատակով՝ Հարավային Օսիա ռուսական զորամիավորումների ներխուժումից հետո:

Փաստահավաք խմբի կողմից հրապարակված այս զեկույցը հերթական հարվածն է Վրաստանի իշխանությունների միջազգային հեղինակությանը եւ նոր սառնություն կհաղորդի Արեւմուտքի հետ այդ երկրի հարաբերություններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստանի նախագահի կողմից իրականացվող արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եվրաստլանտյան կառույցներին, առաջին հերթին՝ ՆԱՏՕ-ին անդամակցումն էր, ակնհայտ է, որ ստեղծված պայմաններում Վրաստանը կանգնած է արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների եթե ոչ կտրուկ վերանայման, ապա առնվազն դրանցում որոշակի փոփոխություններ կատարելու մարտահրավերի առջեւ: Սակայն այս խնդրի լուծումը ցանկացած երկրի, այդ թվում եւ Վրաստանի պարագայում,

զգալի ռեսուրսներ եւ ժամանակ է պահանջում, ինչը նշանակում է, որ առնվազն կարճաժամկետ հեռանկարում Վրաստանի արտաքին քաղաքականության եւ դրա հեռանկարների շուրջ առկա անորոշությունը կպահպանվի:

Վրաստան–Արեւմուտք հարաբերություններում ձեւավորվող լարվածության հետեւանքներն իրենց զգալ կտան ողջ Հարավային Կովկասում: Վերջին ամիսներին արեւմտյան տարբեր վերլուծական կենտրոնների հրապարակումներում ակնհայտ խոսվում է Վրաստանի՝ որպես էներգետիկ ռեսուրսների տարանցիկ երկրի, հանդեպ վստահության կտրուկ նվազման մասին: Վրաց-ռուսական պատերազմը ցույց տվեց, որ ցանկացած պահի Վրաստանի տարածքով էներգետիկ ռեսուրսների տարանցումը կարող է ընդհատվել, ինչը լուրջ անհանգստություն է առաջացնում ինչպես եվրոպական, այնպես էլ ամերիկյան քաղաքական ու տնտեսական շրջանակներում: Ակնհայտ է, որ տարածաշրջանային նոր էներգետիկ ծրագրերի, այդ թվում՝ «Նաբուկկո» գազամուղի կառուցմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներում Վրաստանն այլևս կորցրել է վստահելի տարանցիկ երկրի նախկին կարգավիճակը: Այս առումով որոշակիորեն ավելացել են Հայաստանի հնարավորությունները՝ հանդես գալ որպես վստահելի տարանցիկ երկիր տարածաշրջանային տարբեր ծրագրերի քննարկման ընթացքում, հանգամանք, որը կարող է նպաստել տարածաշրջանում Հայաստանի դերի եւ նշանակության ավելացմանը:

ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ. ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ Սեւակ Սարուխանյան

Սեպտեմբերի երկրորդ կեսին Իրանի միջուկային ծրագրի շուրջ միջազգային քաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց: Աշխարհի 20 առաջատար պետությունների ղեկավարների մասնակցությամբ ամերիկյան Պիթսբուրգում ընթացող գազաթաժողովի օրերին ԱԵՄԳ-ը հայտարարեց, որ Իրանը ուրանի հարստացման նոր գործարան է կառուցում Դոմ քաղաքի մոտ: Այս հայտարարությունը կրկին ակտուալացրեց «իրանական հիմնախնդիրը»՝ Իրան – «վեցնյակ» բանակցությունների վերսկսման հիմք ստեղծելով:

Այն, որ ԱԵՄԳ հայտարարությունը հնչեց «քսանյակի» գազաթաժողովի օրը, հավանաբար, արդյունք էր ԱՄՆ-ի կողմից ԱԵՄԳ ղեկավար Մ.Էլ-Բարադեյի դեմ սկսված տեղեկատվական եւ քարոզչական պայքարի, որի հիմնական բովանդակային հիմքն էր կազմում ԱԵՄԳ-ին ներկայացված մեղադրանքներն այն մասին, թե այս կառույցը միջազգային հանրությունից թաքցնում է Իրանի միջուկային ծրագրին վերաբերող կարեւոր փաստեր: ԱԵՄԳ «հակաիրանական» հայտարարությունը, հավանաբար, այս մեղադրանքներից «արդարանալու» միջոց դարձավ: Այն, որոշ վերապահումներով, պայթող ռումբի ազդեցություն ունեցավ միջազգային լրատվական դաշտում, իսկ Փիթսբուրգում աշխարհի առաջատար պետությունների ղեկավարները ստիպված եղան հայտարարություններով հանդես գալ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող գործընթացների վերաբերյալ: Նման քայլից չկարողացան խուսափել նաեւ Իրանի ավանդական գործընկերներ եւ «պաշտպաններ» Ռուսաստանի եւ Չինաստանի ղեկավարները:

Չինաստանի ղեկավարը բավարարվեց «Իրանի նոր քայլերը մեզ լրջորեն անհանգստացնում են» հայտարարությամբ, իսկ ՌԴ նախագահի գնահատականը Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ, թերեւս, ամենակոշտն էր պաշտոնական Մոսկվայի կողմից երբեւէ հնչեցվածներից: Դ.Մեդվեդեւն ասաց, որ Իրանը քայլեր է ձեռնարկում, որոնք հարվածում են այդ թվում նաեւ այն պետություններին, որոնք ցանկություն ունեն

Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ խաղաղ հանգուցալուծում գտնել եւ օգնել այդ երկրին:

Նշենք, որ, համաձայն պաշտոնական Թեհրանի տարածած տեղեկատվության, կառուցվող գործարանի մասին ԱԷՄԳ-ը տեղեկացվել է 8 ամիս առաջ, եւ գործակալության բոլոր ղեկավարներն ու անդամ երկրների համապատասխան կառույցներն իրազեկված են եղել այդ ձեռնարկության մասին: Դժվար է ասել, թե որքանով է Թեհրանի հայտարարությունը համապատասխանում իրականությանը, սակայն ակնհայտ է, որ եթե անգամ ամեն ինչ եղել է այնպես, ինչպես նշում են իրանցիները, Վաշինգտոնը փորձել է ակտիվացնել «իրանական հիմնախնդիրը՝ ձգտելով այն վերադարձնել միջազգային քաղաքական օրակարգի առաջին պլան: Պիթսբուրգի գազաթաժողովը Վաշինգտոնին այդ հնարավորությունը տվեց. հմուտ դիվանագիտության շնորհիվ ամերիկացիներն ունեցան քիչ թե շատ ընդհանուր միջազգային գիծ Իրանի եւ նրա միջուկային ծրագրի վերաբերյալ, որի ընդհանրական հիմնաքարն է «Թեհրանը բոլորին հիասթափեցնում է» սկզբունքը:

Արդյունքում՝ հոկտեմբերի 1-ին ժնեւում Իրան–«վեցնյակ» (Ռուսաստան, ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան) ձեւաչափով անցկացված բանակցություններում իրանական կողմը բախվեց միջազգային հանրության հիմնականում համախմբված տեսակետին: Սակայն բանակցությունները եւ անգամ ամերիկացիների տված «լավ» եւ «դրական» գնահատականներն իրականում ցույց տվեցին, թե վերջին մեկ տարվա ընթացքում (Իրան–«վեցնյակ» վերջին բանակցությունները տեղի են ունեցել 2008-ի ամռանը) փոխվել է ոչ այնքան Իրանի միջուկային քաղաքականությունը, որքան միջազգային հանրության դիրքորոշումն Իրանի հանդեպ:

Այսպես, ժնեւյան հանդիպման ժամանակ առաջին անգամ բանակցություններում չքննարկվեցին Իրանի՝ ուրանի հարստացման իրավունքը եւ ծրագիրը: Առաջին անգամ միջազգային հանրությունը պահանջ ներկայացրեց Իրանին ոչ թե փակել Նաթանգի ուրանի հարստացման գործարանը, այլ անխափան մուտք ապահովել ԱԷՄԳ աշխատակիցներին նոր կառուցվող գործարաններում ստուգումներ իրականացնելու համար:

Բանակցություններից հետո միջազգային լրահոսում տարածվեց տեղեկատվություն, թե Իրանը համաձայնել է իր տարածքում արտահանվող ուրանը հարստացնել արտասահմանյան գործարաններում, սակայն ոչ իրանական, ոչ էլ արտասահմանյան պաշտոնական աղբյուրները տեղեկատվությունը չհաստատեցին: Դրա փոխարեն հոկտեմբերի 3-ին Մ.Էլ-Բարադեյը հայտարարեց, որ պաշտոնական Թեհրանը նոր եւ

«հետաքրքիր» առաջարկություն է ներկայացրել «վեցնյակին»․ իր գործարաններում հարստացնել ուրանը մինչև 3-5 տոկոս, հետո տեղափոխել արտասահմանյան գործարաններ, որտեղ այն կվերահարստացվի մինչև 20 տոկոս (միջուկային-վառելիքային եւ բժշկական նշանակության հարստացման մակարդակ) եւ հետ կդարձվի Իրան: Այս ամբողջ ընթացքը կգտնվի ԱԷՄԳ ընդհանուր հսկողության տակ: Սա Իրանի առաջին եւ միակ լուրջ զիջումն է միջուկային բանակցություններում:

«Վեցնյակի» պետությունները համաձայնել են քննարկել Իրանի «դրական նշանակություն ունեցող» առաջարկությունը մինչև հոկտեմբերի 19-ը, իսկ այդ օրը նրանց պետք է միանա Իրանի ներկայացուցիչը՝ համապատասխան փաստաթուղթ, հավանաբար համաձայնագրի տեսքով, ստեղծելու համար:

Փաստորեն, ժնեւյան բանակցությունները, որոնք ստացան բոլոր կողմերի բարձր գնահատականը, փոխզիջումային ֆոն ստեղծեցին երկու՝ Իրան – միջազգային հանրություն, կողմերի համար էլ: Եթե բանակցությունների արդյունքում ձեռք բերվի վերջնական համաձայնություն, ապա Իրանը կպահպանի իր՝ ուրանի հարստացման ծրագիրը, իսկ արեւմուտքը կկարողանա առավելագույն չափով վերահսկել այն:

Սակայն այստեղ բավական շատ են հարցերը, որոնք քննարկման եւ վերլուծման կարիք ունեն: Դրանցից ամենակարեւորը, մեր կարծիքով, հետեւյալն է. ինչո՞ւ են Թեհրանն ու Վաշինգտոնը մեղմում իրենց դիրքորոշումները: Այստեղ կարող են լինել մի քանի հնարավոր պատասխաններ, որոնցից երկուսն առավել հնարավոր են թվում.

1. Հոկտեմբերի 3-ին «New York Times» հեղինակավոր պարբերականը տեղեկություն հրապարակեց, որ համաձայն ԱԷՄԳ փակ աշխատանքային փաստաթղթի, Իրանն արդեն տիրապետում է միջուկային զենքի արտադրման տեխնոլոգիաներին: Նման կարծիք ունի նաեւ հեղինակավոր «Գիտական եւ միջազգային ինֆորմացիայի ինստիտուտը» (ISIS): Այս պարագայում, հնարավոր է, որ Իրանի դիրքորոշման մեղմացումը պայմանավորված է նրանով, որ Թեհրանն արդեն իսկ ունի բավարար կարողություն միջուկային զենք ստեղծելու համար եւ կարիք չունի հետագա սուր հակամարտության, իսկ Վաշինգտոնն, իր հերթին, սկսել է միջուկային Իրանի հետ համակերպվելու քաղաքականություն վարել՝ հաշվի առնելով, որ դեռեւս չկա «իրանական հիմնախնդրի» լուծման ռազմական այլընտրանք:

2. Իրանն ու ԱՄՆ-ը, մեղմացնելով դիրքորոշումները, դրական հող են ստեղծում հարաբերությունների լիարժեք կարգավորման համար: Ակնհայտ է, որ Իրանում ծավալված ներքաղաքական ճգնաժամը, որը

բերեց մարդկային զոհերի, ձերբակալվածների եւ նրանց խոշտանգումների, ԱՄՆ-ի համար լավ հնարավորություն ստեղծեց՝ ցույց տալու միջազգային հանրությանը եւ առաջին հերթին՝ ԵՄ-ին, թե որքան ճիշտ եւ հիմնավորված էին ամերիկյան ճնշումները երրորդ պետությունների վրա՝ ուղղված Իրանի հետ նրանց համագործակցությանը խոչընդոտելուն: Այսօր Իրանը գիտակցել է, որ ներքաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով գրեթե անհնար է դարձել ֆինանսատնտեսական եւ այլ ոլորտներում համագործակցության զարգացումը ԵՄ-ի հետ ու ստիպված է համաձայնության գալ Միացյալ Նահանգների հետ:

Իր հերթին՝ Վաշինգտոնի տարածաշրջանային քաղաքականության ողջ փիլիսոփայությունն այսօր ԱՄՆ վարչակարգին ստիպում է զիջումների գնալ Իրանի հետ հարաբերություններում: ԱՄՆ-ին գուցե անհրաժեշտ է ստանալ Թեհրանի համաձայնությունը եւ, հնարավոր է, օգնությունը՝ Աֆղանստանում, Իրաքում եւ անգամ Պակիստանում ամերիկյան ռազմավարության իրականացման եւ իրավիճակի կայունացման գործում: Նույն Աֆղանստանում, ստեղծված խայտառակ իրադրության պատճառով, արդեն ամսից ավելի չի հայտարարվում նախագահական ընտրություններում հաղթողի անունը՝ քաղաքացիական պատերազմից խուսափելու համար, եւ այստեղ, առանց Իրանի միջամտության եւ աջակցության դժվար է հասնել իրադրության անգամ մասնակի կարգավորման: Ինչ վերաբերում է Պակիստանին, ապա, մեր համոզմամբ, հեռու չէ այն օրը, երբ ԱՄՆ-ը ստիպված է լինելու «զինաթափել» պակիստանյան միջուկային զինանոցը, քանի որ օրեցօր աճում է դրա՝ միջազգային ահաբեկիչների ձեռքն ընկնելու հնարավորությունը: ԱՄՆ տարածաշրջանային կարեւոր խնդիրներն անհնար է իրականացնել առանց Իրանի հետ հարաբերությունների կարգավորման եւ համագործակցության:

Այսօր տարածաշրջանում ստեղծված իրավիճակը բավական լավ հիմք է ստեղծում Իրանի միջուկային հիմնախնդրի կարգավորման համար: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը նման ցանկություն ունի, նրան անհրաժեշտ է ամեն կերպ «վերաբեռնավորել» հարաբերությունները Թեհրանի հետ: Հավանաբար, նման ցանկություն ունի նաեւ Իրանի ղեկավարությունը: Թե ինչպես կընթանան գործընթացները հետագայում, ցույց կտա ժամանակը:

Իսկ այսօր ակնհայտ է, որ Իրանի շուրջ ծավալվող գործընթացներից հիմնականում դժգոհ է Իսրայելը: «Haaretz» պարբերականում սեպտեմբերի 30-ին հրատարակված մի նյութում Բ.Օբամայի «իրանական քաղաքականությունը» համեմատվեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Չեմբերլենի «գերմանական քաղաքականության» հետ, որն ի վերջո հանգեցրեց նացիզմի հզորացմանը: Նույն պարբերականը մեկ օր անց հրատարակեց

հայտնի իսրայելցի վերլուծաբան Ա.Բենի հողվածը, որում նշվում էր, որ միջազգային հանրությունը կարծես թե հաշտվել է Իրանի սպասվելիք միջուկային կարգավիճակի հետ, իսկ Իսրայելին մնում է կամ հարվածել Իրանին, կամ սպասել այնքան ժամանակ, մինչև որ ամերիկյան վարչակարգը համաձայնի դա անել: Իսկ Իսրայելի արտաքին հետախուզության նախկին ղեկավար Դ.Յատոմը, իսրայելական հեռուստատեսությանը տված հարցազրույցում, մեկնաբանելով Իրան–«վեցնյակ» բանակցությունները, ասաց. «Թող խոսեն, միեւնույն է, անհրաժեշտ է լինելու ռմբակոծել»:

Իրականում այսօր Իսրայելը գտնվում է տարածաշրջանային առումով բավական բարդ իրավիճակում: Տեղի վերլուծաբաններն արտահայտում են այն կարծիքը, թե Բ.Օբամայի տարածաշրջանային քաղաքականությունը դադարել է հաշվի առնել Թեյ Ավիվի շահերը: Այս առումով, Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունները լինելու են այն հիմնական փորձաքարը, որը պետք է ստուգի Վաշինգտոն–Թեյ Ավիվ հարաբերությունների ռազմավարական ամրությունը:

ՈՌԻՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սերգեյ Կարազանով

Որ գլոբալ կառավարման համակարգը խափանումներ է տալիս՝ վկայությունները շատ են: Նոր խաղացողների, այդ թվում՝ ծանրակշիռ «ուժի կենտրոնների» երեւան գալը, որոնք չեն ցանկանում հարմարվել ամերիկակենտրոն աշխարհակարգին, միջուկային զենքի չտարածման կարգի արագ դեգրադացումը, խոշոր տերությունների՝ անդրսահմանյան ու տարածաշրջանային անբարենպաստ գործընթացների վերահսկման անկարողությունը. ահա համաաշխարհային կարգի խորացող դիսֆունկցիայի վկայություններից սուսկ ամենացայտունները:

«Միաբեւեռության պահը», որն առաջացավ «սառը պատերազմից» հետո, չհանգեցրեց Միացյալ Նահանգների «մեղմ» գերիշխանության վրա հիմնված միջազգային համակարգի հաստատմանը եւ ամենուրեք ժողովրդավարության ու ազատական շուկայական տնտեսության ամերիկյան մոդելի տարածմանը: Միակ գերտերության փորձերը՝ ապավինել միայն սեփական հզորությանը, ավարտվեցին անհաջողությամբ:

Միջազգային հարաբերությունների հետգերիշխանական փուլի էությունը կախված կլինի առանցքային «ուժի կենտրոնների» փոխգործակցության բնույթից ու որակից: Այսպես, հավասարակշռված տնտեսական կարգի ձեւավորումն անհնարին է առանց ամերիկա-չինական հարաբերությունների կարգավորման: Չինաստանը կարելու է նաեւ որպես կայունության գործոն գլոբալ քաղաքականության ասպարեզում: Սակայն առանց Մոսկվայի ու Վաշինգտոնի միջեւ արդյունավետ կապերի հիմնման, հնարավոր չէ անվտանգության ոլորտում միջազգային հարաբերությունների նոր ճարտարապետության ստեղծումը:

* * *

Մի քանի տարվա ընթացքում Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունները պլանաչափորեն վատթարացան, իսկ 2008թ. ամռանն ու աշնանը հասան ամենացածր կետին վերջին քառորդ դարի ընթացքում: Իրավիճակը սպառնում էր վերածվել համակարգային դիմակայության փուլի:

«Սառը պատերազմի» եւ նրան հաջորդած ամերիկյան գերակայության հաստատման փորձերի ժառանգությունը եղավ փոխադարձ անվստահության բարձր մակարդակը, սակայն ավելի խորը՝ ռուսական

կողմի մոտ: Մոսկվայում գերակշռում է այն համոզմունքը, թե Միացյալ Նահանգները 1990-ական թվականներին օգտվեց Ռուսաստանի թուլութունից եւ անգամ ջանաց ձգել այդ վիճակը: «Ժողովրդավարության առաջխաղացումն» ընկալվում է որպես ամերիկյան աշխարհաքաղաքական շահերի հունով տարբեր երկրների «հնազանդ» զարգացման համար պայմանների ստեղծում: Ելնելով վերջին 20 տարիների փորձից՝ ռուսական քաղաքական դասը գտնում է, որ զիջողականության ու բարի կամքի դրսևորումները Վաշինգտոնի կողմից պատշաճ կերպով չեն ընկալվում եւ միայն գրգռում են նրա ախորժակը:

21-րդ դարի սկզբին ռուս-ամերիկյան հարաբերությունների արագ վատթարացման հիմնական պատճառը հանդիսացավ Ռուսաստանի կենսականորեն կարելոր շահերի հետ հաշվի նստելու ԱՄՆ ցանկության բացակայությունը:

Նախեւառաջ, այն վերաբերում է հետխորհրդային տարածքի էվոլյուցիային՝ որպես Ռուսաստանի գլխավոր արտաքին քաղաքական առաջնահերթության: Պատմամշակութային, տնտեսական ու ռազմավարական բնույթի շարժառիթներով Մոսկվան ձգտում է, որպեսզի նախկին խորհրդային հանրապետությունների մեծամասնությունը մասնակցի դեպի իրեն կողմնորոշված անվտանգության համակարգին (Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն - ՀԱՊԿ) եւ ինտեգրման նախագծին (Եվրասիական տնտեսական ընկերակցություն):

Միացյալ Նահանգներն՝ ընդհակառակը, անցկացնում է նախկին խորհրդային հանրապետությունները Մոսկվայից կտրելու ուղեգիծ՝ նրանց ընդգրկելով ռազմաքաղաքական դաշինքների մեջ կամ այդ ոլորտում ստեղծելով երկկողմանի գործընկերություն: Վաշինգտոնը նաեւ եռանդուն կերպով դիմակայում է ԱՊՀ երկրների էներգետիկայում ռուսական դիրքերի գորացմանը, ինչը չի նպաստում Եվրասիայի էներգետիկ անվտանգության ամրապնդմանը:

Երկրորդ սկզբունքային ուղղությունը անվտանգության եվրոպական մոդելի ձեւափոխումն է, որն այդպես էլ «սառը պատերազմից» հետո նոր ուրվագծեր չընդունեց: Մոսկվան Արեւմուտքից ակնկալում է Ռուսաստանի ու նրա կողմից ստեղծված անվտանգության համակարգի (այսօր՝ ՀԱՊԿ շրջանակներում) ճանաչում իբրեւ իրավահավասար եւ ամբողջական աշխարհաքաղաքական միավոր, որը ՆԱՏՕ-ի հետ մեկտեղ կկազմի անվտանգության ընդհանուր եվրաստլանտյան տարածք:

ԱՄՆ հետաքրքրությունն այն է, որպեսզի դառնա Հյուսիսատլանտյան դաշինքի հենքի վրա կառուցված համաեվրոպական անվտանգության գլխավոր երաշխավորը: Դրա գործնական դրսևորումն է ՆԱՏՕ-ի ընդար-

ծակման ուղեգիծը, դաշինքի կազմում եվրոպական երկրների ճնշող մեծամասնության ընդգրկումը: Մնացածներին առաջարկվում է «կրտսեր գործընկերոջ» կարգավիճակ: Բացի ակնհայտ առճակատումից, ինչը պարունակում է սույն հարցադրումը, կասկած է հարուցում նման խնդիր կատարելու դաշինքի ընդունակությունը:

Վերջապես, Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները միանգամայն տարբեր կերպ են տեսնում իրենց դերը համաշխարհային համակարգում: Ռուսաստանը դիտում է իրեն որպես բազմաբևեռ աշխարհի բեւեռներից մեկը, որն անցկացնում է անկախ ուղեգիծ՝ հիմնված ազգային շահերի սեփական ընկալման եւ զարգացման սեփական մոդելի վրա: ԱՄՆ գլոբալ ռազմավարությունը փաստացի միաբեւեռության, քաղաքական բարեկիրթ լեզվով արտահայտած՝ ամերիկյան առաջատարության վերականգնման համար միջոցներ գտնելն է:

Փոխադարձ անհամաձայնությունն դրսևորվում է բազմաթիվ ոլորտներում:

Օրինակ, տարբեր կերպ է ընկալվում պահպանվող միջուկային հավասարակշռությունը: Ռուսաստանը նրանում տեսնում է իր ռազմական անվտանգության հիմքը՝ միջազգային ասպարեզում ազդեցության գլխավոր գործիքներից մեկը, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների հետ իրավահավասար երկխոսության օգտին հիմնական փաստարկը:

Այստեղից էլ՝ հակահրթիռային պաշտպանության համակարգի ծավալման շուրջ հակասությունները: Եթե ԱՄՆ-ը դառնա հրթիռամիջուկային զենքի համար անխոցելի, ռուսական զինանոցը կկորցնի իր զսպիչ դերը: Առհասարակ, Ամերիկյան միջուկային զենքը դիտում է իրեն խոչընդոտ ցանկացած այլ երկրի կամ երկրների խմբի նկատմամբ բազմակի ուժային գերազանցության հասնելու ճանապարհին: Միայն միջուկային գործոնը չի թույլատրում լիովին իրականացնել սովորական սպառազինություններում Ամերիկայի Միացյալ Նահանգների վիթխարի առավելությունը:

Կողմերը տարբեր կերպ են մեկնաբանում նաեւ «սառը պատերազմի» ավարտը: Մոսկվան իրեն պարտված չի համարում եւ ուստի հայտարարում է հետպատերազմյան միջազգային կարգի ձեւավորմանը՝ Արեւմուտքի հետ համահավասար մասնակցության իր իրավունքի մասին: ԱՄՆ-ը վստահ է «սառը պատերազմում» սեփական հաղթանակի եւ Ռուսաստանի պարտության մեջ:

Առհասարակ, «հաղթող-պարտվող» կատեգորիաներում գաղափարախոսական դիմակայության արդյունքների մեկնաբանությունը չափազանց բացասաբար է ազդել եւ Միացյալ Նահանգների, եւ Ռուսաստանի վրա: Ամերիկայի ու նրա դաշնակիցների տրիումֆալիզմը, որը, մասնավորապես, դրսևորվեց անկաշկանդ կերպով ուժի կիրառման պատրաստա-

կամության մեջ, հարուցեց Ռուսաստանի պաշտպանական, իսկ երբեմն՝ ավելորդ նյարդային անդրադարձը, նպաստեց փոխադարձ անվստահության եւ կասկածանքի կուտակմանը, որն այժմ հեշտ չէ հաղթահարել:

* * *

«Վերագործարկման» առաջարկությունն, ինքնին, դրական փաստ է: ԱՄՆ նոր վարչակազմը գիտակցում է, որ Մոսկվայի անտեսումը եւ, առավել եւս, նրա հետ նոր դիմակայությունը ոչ միայն չեն լուծի ամերիկյան արտաքին քաղաքականության ոչ մի իրապես կարելու խնդիր, այլեւ՝ ընդհակառակը, կբարդացնեն իրավիճակը: Կարելի է միայն ողջունել Ռուսաստանի հետ երկու երկրների շահերի քննարկման Միացյալ Նահանգների պատրաստակամությունը եւ դրանց «փոխանակման» հնարավորությունը:

Սակայն առաջարկված «վերագործարկման» տարբերակի կենսագործումը կարող է անվստահություն սերմանել եւ, ի վերջո, չհանգեցնել հարաբերությունների բարելավման (առաջին հերթին, այն վերաբերում է միջուկային զինանոցների զգալի կրճատման խնդրին): «Վերագործարկումը» կրում է նեղ եւ բացառապես ընտրովի բնույթ. այն գրեթե չի շոշափում Ռուսաստանի կենսականորեն կարելու, առաջնային շահերը:

Այսպես, պահպանվում է անորոշությունը ՆԱՏՕ-ի ընդարձակման (այդ թվում՝ դեպի ԱՊՀ երկրներ) միջին ու երկարաժամկետ հեռանկարների հարցում: Շրջանցվում են ռուս-ամերիկյան հարաբերությունների համար այնպիսի հիմնարար խնդիրներ, ինչպիսիք են գլոբալ ուղղությամբ երկու երկրների դերը, եվրոպական անվտանգության բնույթը եւ այնտեղ Ռուսաստանի տեղը, հետխորհրդային տարածքի աշխարհաքաղաքականությունը եւ այլն:

Եթե փոփոխությունները չնպաստեն Ռուսաստանի եւ Ամերիկայի կենսականորեն կարելու շահերի իրագործմանը, «հնարավորությունների պատուհանը» արագ կփակվի: Բոլոր հարցերում, հատկապես տարածաշրջանային բնույթի, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առկա է բացասական փոխկախվածություն: Կողմերն ունեն միմյանց արտաքին քաղաքական վնաս հասցնելու տարբեր մասշտաբի, բայց համադրելի ներուժ:

Այս կապակցությամբ, Մոսկվային ու Վաշինգտոնին անհրաժեշտ է ամենակարճ ժամկետներում հաղթահարել կուտակված բացասականը եւ առաջարկել նոր, դրական օրակարգ: Նրա հիմնարար սկզբունքը պետք է հնչի մոտավորապես այսպես. կողմերից մեկի քաղաքականությունը չի կարող սպառնալիք ներկայացնել մյուս կողմի կենսականորեն կարելու կամ նշանակալից շահերին, իսկ համագործակցությունը պետք է օժանդակի այդ շահերի իրականացմանը: Դրական

փոխկախվածության հաստատումը հարկավոր է ամրացնել տնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, որի ներուժն առաջժամ օգտագործվում է նվազագույն չափով:

* * *

Կարելորագույն փոխադարձ շահերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից գլխավորները գտնվում են ոչ թե երկկողմանի, այլ երրորդ երկրների հետ հարաբերությունների ոլորտում:

Միացյալ Նահանգների համար այն Աֆղանստանի, Իրաքի, Իրանի, Յյուս. Կորեայի ու Մերձավոր Արեւելքի խնդիրների լուծումն է: Մոսկվայի համար՝ հետխորհրդային տարածքի երկրների, առաջին հերթին՝ Ուկրաինայի հետ ընդունելի փոխզիջման հասնելն է, ինչպես նաեւ Ռուսաստանի տեղի ու դերի սահմանումը եվրոպական անվտանգության համակարգում:

Կենսականորեն կարելոր շահերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք միայն մասամբ են հատվում. հիմնականում կամ գտնվում են տարբեր հարթություններում, կամ կողմերի համար ունեն արմատապես տարբեր կշիռ:

ԱՄՆ կենսականորեն կարելոր շահերի թվում են Իրաքից արժանավայել կերպով հեռանալը, Աֆղանստանում պարտության կանխումը եւ այդ երկրի կայունացումը, Պակիստանի փլուզման ու նրա միջուկային զենքի վրա հսկողության կորստի թույլ չտալը: Վաշինգտոնին առավելագույն չափով անհանգստացնում է Իրանի կողմից միջուկային կարգավիճակի ձեռքբերման հեռանկարը, որը կարող է կոլապսով սպառնալ Միացյալ Նահանգների ռազմաքաղաքական դիրքերին ողջ Մերձավորարեւելյան տարածաշրջանում: Ռուսաստանը շահագրգռված չէ Աֆղանստանի ապակայունացմամբ, Պակիստանի միջուկային զենքի վրա հսկողության կորսմամբ կամ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերմամբ: Սակայն նրա շահերի առաջնայնությունը մեկ-երկու մակարդակ ցածր է ամերիկյանից:

Ռուսաստանի կենսականորեն կարելոր շահերից է հետխորհրդային տարածքում իր դե-ֆակտո գերիշխող ազդեցության պահպանումը, դեպի այդ տարածաշրջան այլ երկրների դաշինքների, առաջին հերթին՝ ՆԱՏՕ-ի ընդարձակման թույլ չտալը: Նման ընդարձակումը սպառնում է հակամարտությունների հերթագայությամբ, ապա եւ մեծ պատերազմով: Այս ոլորտը կազմում է ռուս-ամերիկյան հարաբերությունների բացասական օրակարգի հիմքը: Մինչդեռ, տվյալ հարցերը (հատկապես Յյուսիսատլանտյան դաշինքի ընդարձակումը) բուն ԱՄՆ անվտանգության ապահովման տեսանկյունից կենսականորեն կարելոր չեն:

Մինչեւ վերջին ժամանակներս երկկողմանի հարաբերությունների

բնագավառում ԱՄՆ-ի համար Ռուսաստանի նշանակությունը գլխավորապես այն էր, որ Ռուսաստանն աշխարհի միակ երկիրն է, որ ընդունակ է ֆիզիկապես ոչնչացնելու Միացյալ Նահանգները: Սակայն ռուսական միջուկային զինանոցի կիրառումը գործնականորեն անհավանական է, եւ այդ գործոնն, ինքնին, չստիպեց Ամերիկային դիտարկելու Ռուսաստանի հետ կառուցողական հարաբերությունները որպես ինքնանպատակ:

Այսօր իրադրությունը փոխվում է: Մոսկվայի հետ գործընկերային հարաբերությունների կառուցումը Վաշինգտոնի համար թեեւ ունի համեմատաբար փոքր արժեք, քան Մոսկվայի համար Վաշինգտոնի հետ հարաբերությունների կառուցումը, բայց կարող է դասվել Ամերիկայի կարելուրագույն արտաքին քաղաքական շահերի կարգը: Այն կապված է գլոբալ համատեքստի մասշտաբային փոփոխության հետ:

Առանց երկու միջուկային գերտերությունների կառուցողական փոխգործակցության անհնարին է կասեցնել կամ սահմանափակել միջուկային զենքի տարածումը եւ, առավել եւս, մշակել միջուկային զսպման նոր բազմակողմանի կարգ, որն անհրաժեշտ է ձեւավորվող միջուկային բազմաբևեռության պայմաններում: Ջորջ Բուշի վարչակազմի արտաքին քաղաքականության ձախողումներն օբյեկտիվորեն մեծացնում են Ռուսաստանի կարելուրությունն Աֆղանստանի կայունացման եւ Իրանի միջուկային խնդրի լուծման հարցերում, որոնք Բարաք Օբամայի վարչակազմը սահմանել է իբրեւ առաջնահերթություններ: Մոսկվան նաեւ կարող է օգնել հյուսիսկորեական միջուկային ճգնաժամի եւ մերձավորարեւելյան հակամարտության լուծման հարցերում: Վերջապես, Մոսկվայի կարելուրությունը մեծանում է այն չափով, որքանով Չինաստանը վերածվում է գլոբալ տերության, ինչը մարտահրավեր է նետում միջազգային համակարգում ԱՄՆ առաջատարությանը:

Ռուսաստանը, ինչպես Ամերիկան, շահագրգռված է միջուկային զենքի չտարածման կարգի վերջնական փլուզման կանխմամբ, միջուկային զենք ունեցող նոր երկրների միջուկային զսպման բազմակողմանի կարգի մշակմամբ, ինչպես նաեւ Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերումը դիտում է որպես սպառնալիք սեփական անվտանգությանը: Ռուսաստանի այս շահերի կենսագործումն անհնարին է առանց Միացյալ Նահանգների հետ կառուցողական փոխգործակցության:

Վաշինգտոնի հետ վատ հարաբերությունները լրջորեն թուլացնում են Մոսկվայի դիրքերը համաաշխարհային քաղաքականության ու տնտեսության մեջ: Այսպես, առանց սերտ համագործակցության հնարավոր չէ վերջնականապես հաղթահարել Եվրոպայում «սառը պատերազմի» ժառանգությունը եւ ստեղծել անվտանգության եվրոպական համակարգ, որը կհամապատասխանի Ռուսաստանի շահերին:

Ռուսաստան–Միացյալ Նահանգներ առճակատումային հարաբերությունները շարունակելու են հետխորհրդային տարածքի պետություններին դրդել Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ հաշվեկշռված քաղաքականության, իսկ դա կգրգռի Ամերիկային՝ էլ ավելի եռանդուն կերպով սատարել այդ երկրների առավել հակառուսական ուժերին: Վաշինգտոնի հետ վատ հարաբերությունները թուլացնում են Ռուսաստանի դիրքերը նաեւ Եվրամիության ու Չինաստանի հետ հարաբերություններում:

Ռուսաստանի համար ԱՄՆ-ի հետ բնականոն հարաբերությունները բավականաչափ կարելու են տնտեսության եւ հասարակության համալիր արդիականացման տեսանկյունից: Միացյալ Նահանգները՝ որպես բարձր տեխնոլոգիաների եւ ինովացիաների համաշխարհային առաջատար, կարող է դառնալ ռուսական տնտեսության մեջ առավել առաջավոր տեխնոլոգիաների ու որակյալ երկարաժամկետ ուղղակի ներդրումների աղբյուր: Հաջողակ գործարար համագործակցությունից են կախված Ռուսաստանի համար շատ համաշխարհային կարելու շուկաներ (պողպատի, միջուկային վառելիքի, ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի) մուտքի ընդլայնումը եւ համաշխարհային ֆինանսատնտեսական կառավարման ինստիտուտներում նրա ազդեցության մեծացումը:

Ռուսաստանը, լայն ընկալմամբ, զգալի չափով կախվածության մեջ է համաշխարհային տնտեսական իրավիճակից, իսկ ԱՄՆ-ը տերություն է, որն այդ իրավիճակի վրա ցուցաբերում է ամենամեծ ազդեցությունը: Այդ պատճառով, Մոսկվան շահագրգռված է տնտեսական քաղաքականության կոորդինացմամբ, բայց եւ համաշխարհային ճգնաժամի հաղթահարմանն ուղղված ջանքերում Ռուսաստանի մասնակցությունը կարող է Ամերիկային նշանակալից ծառայություն մատուցել:

Գլոբալ համատեքստի մասշտաբային փոփոխությունների պայմաններում Ռուսաստանն ու Միացյալ Նահանգներն իրենց առջեւ խոյացած շատ առանցքային խնդիրներ չեն կարող լուծել առանց մյուս կողմի աջակցության: Այն ստեղծում է բացառիկ իրավիճակ: Հարաբերությունների եւ ուժային կարողությունների ընդհանուր անհամաչափության պահպանման պայմաններում՝ ռուս-ամերիկյան փոխգործակցության առանձին ուղղություններում առաջանում է «խաչաձեւվող» համաչափություն, որի էությունն այն է, որ կողմերը կարող են միմյանց իրենց արժեւորությամբ համադրելի օգուտ բերել:

«Россия в глобальной политике»
թիվ 4, 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան

ՀՀ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ 1

Ռուբեն Սաֆրաստյան

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 8

Ռուբեն Մելքոնյան

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱՑՈՒՄԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 13

Արեստակես Սիմավորյան

ԱՄՆ-Ի ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿ ԿԱՄԱՅՆՔՆԵՐԸ 18

Բենիամին Պողոսյան

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ–ԱՐԵՎՍՈՒՏՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 23

Սեւակ Սարուխանյան

ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ.

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ 29

Սերգեյ Կարազանով

ՌՈՒՄ-ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 34

*Շապիկին պատկերված է
Թոնդրակ լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: